

ՄԱՍԻՆ

ԿԻՍԱՄԱԵԱՅ  ԳԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ՄԵՐ ԱՂՔԱՏԱԽՆԱՄՆԵՐԸ
ՏՈՔՅ. ԴԱԻԹԵԱՆ

ՅՈՌԵՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ
ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ

ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ
ՆՈՐ ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻԱ-
ՅԻ ՄԷՋ

ՔԷՔԷ ՇԻՐՄԱԽԸՐ

ԴԱՂԱՓԱՐԻ ՊԷՏԻՐ ԳԱԻԱՌԻ ԴՐԱԿԱ-
ՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՍԶԱՆՃԵԱՆ
ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ (Թասրերգ.)

ՀԷՆՐԻԲ ԻՊՍԷՆ

ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ ՈՒ ՎԱՆԿԵՐ

ՅՈՒՇԵՐԳ

ԱՐՍԷՆ ՄՈԼԱՐ

ԹՐԱՆՍՎԱԼԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
(Պասմական հըեր)

ՀԱՆՃԱՐ ՆԻ ԽԵԼԱԳԱՐՈՒԹԻՒՆ

Կ. Բ.

Կիսամետայ «ՄԱՍԻՆ»ի յառաջիկայ թիւով պիտի հրատարակուին ուսումնասիրու-
քիւններ Մասթեոս Մամուրեանի գրական գործունեութեան վրայ :

48^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 19-20

21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1899

ՏՆՕՐԷՆ—ԽՄԻՍ.ԴՐԱՊԵՏ ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թերթիս խմբագրութեան կամքէն անկախ պատճառներով, ներկայ միացեալ 19-20 թիւերը հրապարակ կ'ենեն միայն 40 էջերէ բաղկացած:

«ՄԱՍԻՍ»ի ներկայ թիւը ձեռքէ կը ծախուի 100 փր.:

«ՄԱՍԻՍ»ի սնորհմութիւնը հարկադրուած է գաւառացի ՏԱԿԱ-ԻՒՆ ԶԻ ՎՃԱՐԱԾ ԵՐԵՔ ՀԱՐԻԻՐԻ ՄՕՏ բաժանորդներուն ազդարարել, որ փութան անյապաղ իրենց պարտքերը վճարել: Ներկայ թիւէն սկսեալ թերթ կը դրուի միայն վճարած բաժանորդներու:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ, ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի ընդհանուր Ռուսահայ եւ Տաճկահայ հեղինակներէ, որպէս զի իրենց հեղինակութենէն հաճին երկերկու օրինակ ուղարկել Խմբագրութեանս, թերթիս տնօրէնին հասցէով: Խմբագրութեանս ուղարկուած գրքերը թերթի կողքին վրայ պիտի ծանուցուին:

Խմբագրութեանս մէջ ստացուած են.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ Արեւելեան Որբանոցին, 1900 տարւոյ համար ընդարձակ և համառօտ. Կ. Պոլիս, տպագրութիւն Յ. Մասրէնուսեան: Ընդարձակ դին 100 փրյ. համառօտ 40 փրյ.:

ԱԼԷԼՈՒԻՍ, Իննեակ իմաստասիրական, գրեց Յ. Գ. Մ. Կ. Պոլիս, տպագրութիւն Յ. Մասրէնուսեան. 1900. 33 էջ. Գին 5 զրշ.:

ՆՈՐ ԴՍԱԳԻՐԻ ԱՇԽԱՐՀԱՐՈՒԹԵԱՆ, գրեց Տիգրան Յ. Պօզանեան, Կ. Պոլիս, տպագր. Նշան Կ. Պերպերեան. 1900. 208 էջ. Գին 4 զրշ.:

ԱՐԾԱԹ ՄԱՏԵՆԻԿ ՀԱՅ ՏՂՈՅ, համաձայն Ուսումն. Խորհր. Կրթական ծրագրին. հրատարակութիւն Մարգարեան գրատան. տպագր. Յ. Մասրէնուսեան, Կ. Պոլիս, 1899, 74 էջ. Գին 3 զրշ.:

ՄԱՐԳԱՐԻՏԵՆՐ, Մանկապարտէզի-Ծաղկոցի տղաց համար. հրատարակիչ Վ. Յ. Մարգարեան, տպագր. Ուսումնեան, Կ. Պոլիս, 1896. 48 էջ. Գին 50 փարայ.:

Մասիսի վերաբերեալ ամէն նամակ կամ զրուիւն պէտք է ուղղել թերթի տնօրէն-խմբագրին

ՄԻԶԱՅԷԼ ՄԱՍՏԱՆԻՅԱՆ

Stamboul, Bible House, Imprimerie H. Matteosian

Սրամպուլ, Պայպըլ Հաւուգ, Յ. Մասրէնուսեան տպարան

Թերթի տնօրէնը անձամբ կարելի է տեսնել ամէն օր ժամը 6-9, Մատթէոսեան տպարանը:

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊՕՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՒԱՌԵՐԸ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան	44 զրշ.	54
Վեցամսեայ	22 »	27
		12 ֆր.
		6 »

ՄԱՍԻՆ


48^{րդ} ՏԱՐԻ

— 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1899 —

ԹԻԻ 19-20

ՄԵՐ ՊՈԼՍՈՅ ԱՂՔԱՏԱԽՆԱՄՆԵՐԸ

ՏՈՒԹ. ԴԱԻԹԵԱՆ



ՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ զըրկուածներուն, ֆիզիքապէս ու բարոյապէս ինկաճներուն օգնելու գաղափարը, բարոյականի ամենաբարձր ըմբռնումներէն մէկն է. միանգամայն քաղաքակիրթ ընկերական կազմակերպութիւններու հետ սերտիւ կապուած բարդ խնդիր մը :

Ընկերութիւնը իր ամէնէն տարրական ու ամէնէն նախնական ձեւին մէջ, այսինքն նախապատմական մարդը՝ զուրկ պէտք է եղած ըլլար իր նմանին օգնելու զգացումէն. քանի որ նոյնիսկ ատկից շատ աւելի պարզ ու բնական զգացում մը, այսինքն զաւակի սէրը իրեն համար անձանօթ խնդիր մը ըլլալով այդ հոգը միայն էգին թողուած էր : Մարդը իր անձին պահպանմանը միայն հետամուտ, բնական էր որ ջանար զինուի այն ամէն միջոցներովը որոնք ամէնէն լաւագոյն պայմաններուն տակ կ'ապահովեն իր եւին գոյութիւնը :

Գոյութեան այդ անհուն փափաքը

ու կռիւը, ընկերակցութեան տարրական գաղափարը ներշնչեցին իրեն ու օգտակար գտաւ, փոխանակ միայն կիրքերու զարթումի միջոցին էգին դիմելու, շարունակ անոր հետ ապրիլը, որովհետեւ նա (կինը) թէ անհատապէս և թէ իր ծնած զաւակներովը ամէնէն յարմարագոյն օգնականը կրնար ըլլալ իրեն՝ իր մղած պայքարին մէջ :

Այսպէս ուրեմն կազմուեցաւ ընկերութեան առաջին ու էն կարեւոր հիմնաքարը, ընտանիքը ու ատոր հետ մէկտեղ զուգընթացաբար մարդուն մէջ արմատացաւ իր եւի սէրէն անջատ սէր մը, զգացում մը՝ այսինքն իրեններուն սէրը, ինչ որ ահագին յառաջդիմութիւն մըն էր արդէն : Իրմէ զատ ուրիշ մը սիրելու այդ զգացումը, թէև աղարտուած անձնական շահու նկատումներով, սերունդէ սերունդ՝ ընտանիքի ու ընկերութեան բարգաւաճումին համեմատաբար, հետզհետէ զարգացած, նրբացած ու բազմակողմանի կերպարանափոխութիւններու ենթարկուած է, բայց դժբաղդաբար վճիտ ու մաքուր բարոյականի մը բարձրագոյն արտայայտու-

թիւնը լինելու աստիճանին չէ հասած տակաւին :

Ընտանիք մը որչափ բազմանայ ու ծաւալի, իրեն մէջ բնական է որ գտնուին այնպիսի անհատներ որոնք ֆիզիզական որևէ պատճառով մը կարող չըլլան աշխատելու : ատոնք անխնամ չ'ընողելու հոգը, ընտանիքներու գլխաւորին և օրէնադիրներու ուշադրութեան առարկան եղած է միշտ, և կրօնքի հիմնադիրները, ներկայ կամ հանդերձեալ աշխարհին մէջ բարիքներ վայելելու խոստումներով, համոզած են հին ժողովուրդները իրենց անկարող եղբայրներուն օգնելու :

Ուրեմն ընկերութեան մը մէջ, որևէ բնական պատճառով մը կեանքի միջման մէջ տկարացող անհատներուն օգնելու գաղափարը, աշխարհի չափ հին է : Մենք այդ զգացման, այդ գաղափարին սկիզբէն ի վեր կրած բուլբրուն պատմութիւնը չէ որ ընել կուզենք, այլ կը փափաքինք չեչտել ու մատնացոյց ընել սա պարագան թէ, ընկերութեան մը նիւթական ու բարոյական բարգաւաճումին համընթաց՝ տեղի ունեցած է այդ գաղափարին ալ զարգացումը :

Հետեւաբար ընկերութեան մը զարգացման աստիճանին ճշմարիտ հայելին է անոր ունեցած բարեգործական հաստատութիւնները : այսինքն այն երկիրները ուր ամէնէն շատ ու ամէնէն լաւ կազմակերպուած բարենպատակ հաստատութիւնները ունին, անոնք քաղաքակրթութեան բարձրագոյն աստիճաններուն հասած պէտք է նկատել :

Այդ ժողովուրդի մը զարգացման աստիճանը ցուցնող այդ գործիքովը, փորձենք չափել մերինն ալ, հոգ չէ եթէ արդիւնքը աննպաստ ըլլայ, գէթ մերինին ճշմարիտ արժէքը, չափը գիտցած կ'ըլլանք :

որովհետեւ այդ մէկ չափովը ու տկնարկովը պիտի հասկնանք մեր ժողովուրդին վարչական ու տնտեսական կարողութիւնը, անոր բարոյականի ըմբռնումը, վերջապէս քաղաքակրթութեան սանդուղին ո՞ր աստիճաններուն մօտերը գտնուիլը :

Ապահով արդիւնքի մը հասնելու համար սակայն, ընդարձակ սահմանի մը մէջ գործածելու է այդ միջոցը, մինչդեռ իմ՝ նպատակս է Պոլսոյ հայերուն բարեգործական հաստատութիւններէն միայն Աղիսաւախնաւներուն վրայ խօսիլ, թողելով շատ աւելի կարողներու այդ ընդարձակ գործը :

Տաճկահայերու էն զարգացած միջավայրն է Պոլիսը, որ անտարակոյս ամէն հանրային գործերու մէջ գաւառներու առաջնորդը ու վարողն է : արդ ի՞նչ ունինք հոս իբր բարեգործական հաստատութիւն : Հիւանդանոց մը, Աղքատախնամներ, Թաղականներ, հոգեւոյս Միացեալը և Որբանոց մը :

Թաղական խորհուրդները միայն բարեգործական նպատակի մը համար ստեղծուած չեն, այլ թաղին վարչական գործերը վարող մարմիններ են նաեւ, թէև աղքատներն ալ խնամելու հոգը իրենց ծրագրին մէջ կարեւոր տեղ մը ունի : Աղքատախնամները ընդհակառակը, միայն այդ նպատակին համար կազմուած, թաղային խորհուրդներէն կախում ունեցող և կամ անկէ անկախ ժողովներ են : Իրենց գոյութիւնը համեմատաբար շատ հին չէ, կերպով մը թաղականին պարտաւորութիւններէն մէկը իրենց վրայ առած են, աւելի լաւ կատարելու համար, և թէ Պոլսոյ քանի մը կարեւոր թաղերուն մէջ է միայն որ գոյութիւն ունին անոնք, մնացած բոլոր թաղերուն մէջ

դարձեալ թաղական խորհուրդներն են որ կը խնամեն աղքատները :

Հետեւաբար թաղական կամ Աղքատախնամ իբր բարենպատակ կազմակերպութիւն միենոյն նշանակութիւնը ունին, երկուքին ալ գործունէութեան սահմանները միենոյն են . նոյնը նաեւ իրենց հասոյթի աղբիւրը (պնակ, գանձանակ, հանգանակութիւն և քիչ անգամ ներկայացում մը) :

Աղքատախնամները այնպիսի սաղմնային վիճակի մէջ են, որոնցմէ դատել մեր քաղաքակրթութեան չափը, մեծ սխալ մը պիտի ըլլար, բարեբաղդաբար ուրիշ հաստատութիւններ ունինք, աւելի չնորհրով, աւելի արդիացած (modernisé) որոնք կուգան հակառակը ցուցնելու :

Մեր մէջ Աղքատախնամի մը գործունէութիւնը այնչափ պարզ է, որ երկու բառով կարելի է սահմանել, մոռալ և թաշխել . իսկ իբր վարչական կազմակերպութիւն դարձեալ կոնսուլտութիւն մը չունին, կը կառավարուին ժողովէ մը amateurներէ բաղկացած, ինչպէս են դժբաղդաբար մեր աղգային բոլոր պաշտօնները, համոզման և ըմբռնումի տեսակէտով շատ քիչ անգամ համերաշխ, կը գործեն միասին այնչափ ատեն, որ չափ բաղխումը ուժգին չ'ըլլայ, և անգամ մը որ գաղափարներու անհամաձայնութիւնը սաստկանայ, իբր պարզ amateurներ, զերծ ուէ պարտականութենէ, ազատ են քաշուիլ և կամ կռուիլ :

Դիմող աղքատները, բնիկ թաղեցի, շատ քիչ անգամ ֆիզիքապէս աշխատելու անկարողներ են, մեծագոյն մասը կիներ՝ այրի և կամ շատ զաւակներու տէր, կամ անպիտան ամուսինէ մը չարչրկուած որոնք կուգան բան մը փրցընելու : Ասոնց տրուածը կը բաղկանայ

ընդհանրապէս քանի մը քաշ հացէ, կաթէ, երբեմն ալ միսէ, ինչպէս նաեւ դեղէ՝ հիւանդներուն համար : Այս վերջիններուն մէջ մաս մը կայ որ արդարեւ խնամքի պէտք ունի . բայց շատերը կուգան, հիւանդ ձեւանալով քիչ մը սնունդ ստանալու յոյսով :

Մեր աղքատախնամներու վրայ դժուած այս քանի մը տեղեկութիւնները բացայայտ կը ցուցնեն թէ իրենց գործունէութեան սահմանները որքան անձուկ են : Արդարեւ բացի այն հազուագիւտ ֆիզիքապէս աշխատելու անկարող անհատներէն, որոնց նիւթապէս օգնելու խնդիրը ու է առարկութիւն չի վերցնիր, անդին կայ աղքատներու շատ աւելի ստուար թիւ մը, այլապէս շահեկան, ամէնքն ալ առողջ, աշխատելու կարող . բայց և այնպէս իրապէս աղքատ ու կարօտ օգնութեան : Միջավայրի, ընկերական և կամ անհատական պատճառներով ինկած այդ դասակարգը, ժողովրդեան կարեւոր մէկ մասը կը ներկայացնէ ու արժանի է շատ մը նկատումներով լաւ հասկցուած բարեգործութեան մը բոլոր ձեռնտուութիւնները վայելելու :

Ինչպէս վերը ըսինք, բարեգործութիւն ըսուած բանը, օրէնքներով սահմանուած, որոշուած գործ մը չէ . ամէն անհատ, ամէն հասարակութիւն իրեն յատուկ ըմբռնումը ունի այդ մասին, ու ժողովուրդներէն անոնք միայն շատ տեղի լայնօրէն ըմբռնած են զայն ուսնք քաղաքակրթութեան բարձրագոյն աստիճաններուն հասած են արդէն :

Անհատ մը, ընտանիք մը միայն տընտեսական ձախողութիւններու պատճառով չէ որ թշուառութեան կը մատնուի ու հանրային գթութեան կարօտ կը մնայ . դաստիարակութեան թերութիւնը, բա-

րոյականի պակասը, նկարագրի տկարութիւնը, միջավայրի անծանօթութիւնը եւն. եւն. այնպիսի պատճառներ են որ մեր կարծածէն շատ աւելի յաճախ զմեզ թշուառութեան կ'առաջնորդեն: Օրինակի համար գործաւոր մը թէն իր ընտանիքին համար բաւականաչափ թոշակ մը կը ստանայ, բայց բարոյական նկարագրի պակասը, ինչպէս գինովութիւն, շռայլութիւն, ցոփութիւն եւն. եւն., զինքը աղքատութեան մատնած են. նոյնպէս երիտասարդ մը, իր ստացած դաստիարակութեան անբաւականութեանը համար չի յաջողիր գործ մը գտնելու ու իր ընտանիքը թշուառ կ'ըլլայ, ինչպէս նաև մէկը՝ որ կը ձգէ իր հայրենի բնակավայրը, ու դրամ չահելու մտքով առանց նախապէս տեղեկութիւններ քաղելու, կ'երթայ կիյնայ այնպիսի անծանօթ միջավայրի մը մէջ որուն համար բնաւ պատրաստուած չէ և ուր բնականաբար թշուառ կ'ըլլայ. այսպէս դեռ հարիւրաւոր պատճառներ թուել կարելի է, որոնք միշտ աւելի կամ նուազ աղքատութեան մը կը մատնեն հասարակութեան մէկ մասը որ ընդհանրապէս առողջ, աշխատելու կարող անհատներէ կը բաղկանայ, բայց վերջապէս դժբաղդ, արգահատելի ու կարօտ կ'ըլլայ. ընկերութիւնը չի կրնար այսպիսիները երեսէ ձգել, արհամարել զանոնք ու «ձեռքդ ոտքդ կը բռնէ, աշխատէ ու ապրէ» ըսելով անցնիլ:

Բոլոր այս թշուառութիւնները իրենց գաղտնիքները ունին ու ժողովուրդին այդ խորհրդաւոր ու մթին խաւերուն մէջ, ընկերական էն խորունկ վէրքերն են որ շարունակ կ'արիւնին. ճիշդ հոտ է, այդ ծաղքերուն մէջ՝ ուր ճշմարիտ բարեգործութիւնը պէտք է թափանցէ

իր բովանդակ ուժովը, դարմանելու համար այն վէրքերը և ոչ թէ բաւականաչափ կտոր մը հաց ու միս բաշխելով, ճիշդ ինչպէս փողոցի շունբուն տռչել կը նետենք հացի փշրանքները և որոնք ժամ մը վերջ անօթի են դարձեալ:

Բարեգործութեան այս տեսակ ըմբռնում մը պարտք կը դնէ ընկերութեան մը վրայ որ աղքատութիւնը նոյն իսկ իր ակերէն կարելիին չափ ցամքեցնել կարենալու համար, շատ աւելի հզօր ու խելացի կազմակերպութեամբ մը գործէ, քան ինչ որ կ'ընեն մեր Աղքատախնամները: Մենք այսօր առաջարկի մը ձեւով պիտի ներկայացնենք, նպատակայարմար Աղքատախնամի մը ուրուագիծը, խոշոր կէտերը միայն, ու եթէ երբեք գտնուի մեր մէջ այս կարեւոր հարցովը շահագրգռուողներու խումբ մը որ ուզէ ուշադրութիւն դարձնել այս մասին, մենք պիտի ջանանք այն ատեն աւելի մանրամասնութիւններուն վրայ խօսիլ:

Բուն նիւթին անցնելէ առաջ, բանաւոր կը գտնեմ վարչական սկզբունքի մը վրայ խօսիլ որ մեր մէջ՝ տոհմային գործերու տեսակէտով մեծ կարեւորութիւն ունի, այսինքն կեդրոնացում (centralisation) և ապակեդրոնացում (décentralisation) դրութիւնները:

Եւրոպայի մէջ, շատ մը ազգեր կեդրոնացման դրութեամբ է որ կը կառավարեն իրենց հանրային գործերը, իսկ Անկլո-Սաքսոն ցեղերը այդ դրութիւնը մասամբ միայն գործադրելով, անհատական նախաձեռնութեան բաժին մը ձգած են, մանաւանդ բարեգործական ձեռնարկներու մէջ:

Համեմատաբար նուազ զարգացած ցեղերու մէջ, ինչպէս է մերինը, ապա-

կեդրոնացման դրութիւնը ցաւալի ար-
դիւնքներ միայն կրնայ տալ : Անգլիա-
ցիի մը զարգացումը , նկարագիրը ան-
հրաժեշտ է այդ դրութեամբ հիանալի
յաջողութիւններ ունենալու համար :

Մեր մէջ Աղքատախնամները ու թա-
ղականները սանձարձակ ապակեդրոնաց-
ման մը մէջ է որ կը գործեն . օրինակի
համար , Սալմա-Թօմսօնքի , Գասըմ-Փա-
շայի , Պէյքօզի եւն . նման թաղեր , իրենց
տեղական ուժերով է որ կը հոգան աղ-
քատները . մանաւանդ արդէն Պոլսոյ մէջ
թաղեցիութիւնը մնայուն բան մը չէ .
այսօրուան իւսկիւտարցին վաղուան Բե-
րացին է , և այս թաղէ թաղ գաղթա-
կանութեան հոսանքն ալ դրեթէ միայն
ունեւոր դասակարգին յատուկ է , այն-
պէս որ յաճախ անցեալին մէջ շատ մը
փայլուն թաղերուն բոլոր հարուստները
մեկնած ըլլալով , մնացածներուն ձգուած
է ինքզինքնին խնամելու բովանդակ հոգը .
հետեւաբար բարեգործական խնդիրը
կեդրոնացման դրութեամբ մը կազմա-
կերպելը շատ մը առաւելութիւններ ունի
մեզի համար : Նախ մեծ անիրաւութիւն
մըն է որ Բերայի , Գատըգիւղի պէս թա-
ղերուն բարեկեցիկ բնակիչները , բոլո-
րովին ձեռնթափ մնան հեռաւոր աղ-
քատիկ թաղերու օգտակար ըլլալէ , երկ-
րորդ բարոյական ու նիւթական ուժե-
րու այս աստիճան բաժանումը , անկա-
րելի կընէ որեւէ լուրջ ձեռնարկութիւն
մը : Բոլոր այդ միացեալ ուժերով լուրջ
ու օգտակար գործեր կարելի էր կա-
տարել , մինչդեռ ներկայ վիճակին մէջ ,
առանձին առանձին և ոչ մէկ թաղ բա-
րեգործութեան տեսակէտէն նշանակելի
ծառայութիւն մը մատուցած ունի :

Հոս տեղն է յիշելու թէ մեր Ռու-
սահայ եղբայրները , մեզմէ շատ աւելի

լայն ըմբռնած ու լաւագոյն պայմաննե-
րով կազմակերպած են իրենց բարենպա-
տակ հիմնարկութիւնները : Անոնք ոչ
միայն Թիֆլիզի մէջ թաղային բաժա-
նումներ չեն բրած , այլ ամբողջ Կովկաս
բարեգործական կեդրոնական վարչու-
թեան մը հսկողութեամբ մատակարա-
րելու գործնական դրութիւնը ընդունած
են , (թէև այս՝ վերջերս Ռուս կառավա-
րութեան հրամանաւ փոփոխութիւննե-
րու ենթարկուած է) և ինչ որ տեւա-
կան և լուրջ արդիւնքներ տուած է :

Ուրեմն ամբողջ Պոլիսը պէտք է միա-
նայ ու հիմնէ իր միակ Աղփասախնամը ,
վարչապէս անկախ Ազգային վարչութե-
նէն , այլ համարատու անոր և ժողո-
վուրդին . բոլոր թաղերէն մէկ կամ եր-
կու (թաղին մեծութեանը համեմատ)
ներկայացուցիչներ պէտք է կազմեն Աղ-
քատախնամին ընտրողական ժողովը որ
տարին անգամ մը հաւաքուելով կը քննէ
տեղի ունեցած գործառնութիւնները ,
միանգամայն կ'ընտրէ գործադիր մարմին
մը 3-5 անդամներէ բաղկացած , որոշ-
եալ ժամանակամիջոցի մը համար (3-10
տարի) :

Գործադիր մարմինը թէև համարա-
տու զինքը ընտրողներուն հանդէպ , բայց
պէտք է կատարելապէս անկախ ըլլայ
անկէ՝ վարչական տեսակէտով , այսինքն
իրեն յանձնուած գործը վարելու համար
ամէն ազատութիւն պէտք է ունենայ :

Որպէս զի այս գործադիր ժողովը
պարզ amateur ներու խումբ մը չ'ըլլայ ,
պէտք է իր տրամադրութեանը տակ ու-
նենայ՝ թոշակաւոր ու ձեռնհաս պաշ-
տօնեաներու խումբ մը , որոնց թելա-
դրող , հսկող ու վարող մարմինը միայն
պիտի ըլլայ ինքը :

Աղքատախնամը ամէն թաղերու կամ

միացեալ թաղերու մէջ իր թոշակաւոր պաշտօնեան պէտք է ունենայ, իբր իր ներկայացուցիչը, որոշ հրահանգներով ու որոշ իրաւասութիւններով սահմանադրուած և որ կրայ իր գտնուած թաղին մէջ օժանդակներու խմբակ մը կազմել, ինքը մնալով միշտ պատասխանատու հանդէպ կեդրոնին :

Այս պայմաններուն տակ կազմակերպուած Աղքատախնամը, որուն առջեւ կը պարզուի գործունէութեան ընդարձակ ասպարէզ մը, անժխտելի արդիւնքներ կրնայ տալ, եթէ գործին հմուտ անձերէ կազմուած ըլլայ հսկող մարմինը :

Նախ և առաջ հաւատարիմ քննիչ պաշտօնեաներու ու թաղեցիներու օժանդակութեամբը՝ Պոլսոյ մէջ իրապէս կարօտ ու օգութեան արժանի բոլոր ընտանիքներուն մանրամասն ցուցակը կարելի է պատրաստել, վերահասու ըլլալով իւրաքանչիւրին կարօտութեան տեսակին, պատճառներու ու ընտանեկան ուրիշ պարագաներու :

Մեր քսած ձեռով Աղքատախնամը, շատ դիւրութեամբ կրնայ ունենալ իր ձրի կամ աժան ճաշարանները, Դարմանատունը (Dispensaire), Աշխատանոցը, crècheը, ևլն. ևլն. ուր աղքատները իրենց կարօտութեանը համապատասխանող դարմանները կը ստանան :

Մեր այս ներկայացուցած յատկագիծը, որուն մէջ շատ մը բարեփոխումներ կարելի է մտցնել, թերեւս ընթերցողներուն կողմէ գործնական չհամարուի, մանաւանդ պիտի առարկուի անշուշտ թէ այդ բոլորը գործադրելու համար դրամը ուսկի՞ց հայթայթելու է. իսկ ես կը մտածեմ թէ դրամը չէ որ կը պակսի. բայց այդ տեսակ օգտաշատ նպատակ մը գլուխ հանելու համար նախաձեռնութիւն ու բարի կամք ունեցող անձեր ո՞ր գտնելու է. ու եթէ գտնուին իսկ, այն սառ անտարբերութիւնը որ մեր հասարակութիւնը գիտէ ցուցնել որ և է ազնիւ գործի մը համար, կը ջլտէ արդէն ամէն ջանք ու ամէն ձեռնարկ :

Ամէն առաջարկ երբ մտածուած, ծրագրուած վիճակով մը ներկայանայ, ցոյց տալով միջոցներ, որոնք իրագործելի են, կարելի չէ այդ տեսակ առաջարկ մը անգործնական կոչել. Ուրեմն երկրորդ յօդուածով ցոյց պիտի տամ այն բոլոր միջոցները, որոնցմով իմ այսօրուան առաջարկս կարելի է գործադրութեան դնել, միայն եթէ քիչ մը նախաձեռնութեան ոգի, քիչ մըն ալ բարի տրամադրութիւն ցոյց տրուի անոնց կողմէ, որոնց համար անտարբեր ձեւանալը միայն պարտազանցութիւն մըն է :



ՅՈՒՆԵՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՌՋԵԻ

ՊՕՂՈՍ ԲՕԼՕԼԵԱՆ (Բարիզ)



ԽՐՈՒԹԵԱՆ ու ցաւերու հով մը կը փչէ մեր յոգնած երիտասարդութեան վրայ : Արեւելքէն թէ արեւմուտքէն կուգայ այդ ցուրտ հովը . չեմ գիտեր : Կուգայ սակայն այն սառուցիկ բւեռներէն ուր կեանքը մեռած է, ուր մարդ չապրիր : Իբրեւ թիշկ ու իբրեւ անհատ չեմ կրնար հանդարտ աչքով դիտել այս երեւոյթը . չեմ կրնար հանգուրժել որ փչէ ան , ցաւերու ու ողբերու հովը , առանց ցոյց տալու վտանգները , ու փնտռելու անոր պատճառները :

Յոռետեսութեան յիմար հովն է սա որ կը փչէ նոր սերունդին վրայ , այն հովը որ Գերմանիոյ մէջ այնքան զոհեր ըրաւ Վերթէրի ընթերցանութենէն յետոյ ու կարծես հիմա կուզէ զինովցնել հայ երիտասարդութիւնը :

Աւելի առաջ չի գացած , յայտարարեմ թէ թիշկն է որ պիտի խօսի հոս . կը զրուցեմ սա որպէս զի չըսեն յետոյ այն զրազէտները , որոնք իրենց մենաշնորհը կը նկատեն գրելը ու գրագիտութիւնը , թէ օսնակոխ կ'ընեմ հոգիւր ուր մտնելու վկայագիրը չունիմ :

Ա.

Ամէն ժամանակի մէջ գտնուած են մարդիկ , հիւանդներ , որոնք փնտռած են կեանքին դաղանիքը : Մըռած անոր սոսկալի յորձանքներուն մէջ , առանց գիտնալու թէ երբ սկսաւ ան , ու երբ պիտի վերջանայ , բայց կատարելապէս մտած թէ ամէն բան կը ծնի ու կը մեռնի , թէ ամէն բան կը յոգնի ու

կ'անցնի , ու չկրնալով գտնալ նպատակը այս ամենուն , կեանքին ու մահուան , տխուր մտահոգութեամբ մը լեցուած են :

Կեանքը բաղդատելով իր անծանօթ նպատակին , իրենց հոգիին յոյզերը աշխարհի ցաւագարութեանց հետ , ու այս բաղդատութեանց մէջ ցաւերու անաւոր մեծութիւնը տեսնելով լացած են օրերով . չեն կրցած ըմբռնել արարչագործութեան վեհութիւնը , ու տխուր տխուր , աչքերնին մահուան սեւ հորիզոնին վրայ սեւեռած , թափառած են աշխարհի մէջ , ետեւուն քաշկռտելով իրենց հիւանդ միտքին հիւանդ արտայայտութիւնը , անիծելով ամէն բան , ծնողք ու արարիչ , ատելով կեանքը , տիեզերքը , արեւն ու ծաղիկը :

Ամէն երկիրներու մէջ գտնուած են այս հիւանդ երեւակայութեան մեղամաղձոտ ներկայացուցիչները որոնք մըռած իրենց տկար ու անկատար ուղեղին յոռի հակումներէն , առանձնութեան մէջ բանտարկուած , իրենց լացերուն ու ողբերուն մրմունջներով լեցուցած են աշխարհ :

Հիւանդներ եղած են ասոնք , որոնք մեղամաղձոտութենէ վարակուած ամէն բան տխուր , սեւ ու անկատար տեսած են , ու գիտէք թէ մեղամաղձոտութիւնը խենդութիւն մըն է , որ կեանքը սոսկալի բեռ մը կը դարձնէ : Իրերն ու կեանքը մեղամաղձոտին կ'երեւան մահաստուէր ակնոցներու ետեւէ . մարդիկ անճոռնի խեղկատակներ , որոնք չարիք ընել միայն կը ճգնին . ապրիլը չարութեանի որ տխրութեան ու ցաւերու շղթայ մըն է : Ու խեղճը մահը կը փնտռէ , որովհետեւ չունի բաւական ուժ տրամաբանելու համար հանդարտութեամբ ու հասկնալու թէ բոլոր այդ սեւ երեւոյթներուն պատճառը իր մէջն է , թէ հիւանդ է . չի կրնար ըմբռնել ինչպէս դժբախտ է . պատճառը չի փնտռու . արդիւնքը կը բաւէ իրեն , ու այդ արդիւնքը այնքան անտանելի , այնքան դաղբելի կը

թուի որ մահը կը խնդրէ իբրեւ միակ զարմանը, գերագոյն վերջը աշխարհային բոլոր չարիքներուն :

Մեկամաղձոտութեան զանազանութիւններէն է յոռետեսութիւնը, որ եթէ չէ կատարեալ խենդութիւն, յոգնած ջիղերու արտադրութիւնն է, ու եթէ յոռետեսները խելագարներ չեն՝ ջղայններ են, որոնք կը պտտին խելագարութեան սահմանագլուխներուն վրայ, առաջին առիթին անցնելով անկից, իյնալու համար կատարեալ ցնորութեան մէջ, Կ'ուզեմ այս ճշմարտութիւնները ապացուցանել երիտասարդութեան, ու քննելով մեծ յոռետեսներուն կեանքն ու գործը ցուցնել անոնց հիւանդ կողմերը, ցուցնել զլիաւորարար թէ անոնք հակառակ իրենց տաղանդին ու գիտութեան. հիւանդ ծնած են ու հիւանդ մնացած : Ու կ'ուզեմ բացատրել թէ կրնանք հեռանալ այդ ցաւազար գրականութենէն, թէ կամքով ու առողջ աշխատութեամբ կրնանք ամէնքս ալ ունենալ հոգիի ու մտքի անդորրութիւն :

Յոռետեսութիւնը ԺԹ. դարուն մէջ միայն կանոնաւոր մարմին մը առած ու զստական մեթոտի մը կարգը անցած է, եւ այն ալ ջղային հիւանդութեանց աճումին հետ : Դարեր առաջ, կեանքին պայմանները նոյնը չեն եղած. քաղաքակրթութիւնը իր որորանին մէջ, դեռ չէ յոգնեցուցած մարդուն միտքը, ու կեանքը իր նախնական պարզութեան մէջ չէ պահանջած կորովի ու կամքի այն անագին ճիշդ զոր պէտք է ընել այսօր : Յոռետեսութիւնը յառաջդիմած է ջղային դրութեան ակարութեանց հետ, որ ինք ալ քաղաքակրթութեան ետեւէն է ընթացած : Յոռետեսութիւնը ուրեմն արդիւնքն է քաղաքակրթութեան, Բայց հեռու ինձմէ քաղաքակրթութիւնը քրննադատել, կ'իյնամ ես ալ այն տտեն Պրիւսիւնիւթիէն վարդապետական յոռետեսութեան մէջ : Քաղաքակրթութեան դատը շատոնց տեսնուած է, անոր բարիքները պէտք չունին ոչ փողի ոչ թմբուկի, Եթէ մարդիկ այսօր աւելի դժբախտ կը գտնեն զիրենք, քաղաքակրթութեանը չէ յանցանքը : Բայց զժգոհներու թիւը բաղդատելով գոհերուն հետ աննշանակելի փոքրամասնութիւն մը կը գտ-

նենք : Քաղաքակրթութիւնը ընդհանուրին տուած է ապրելու դիւրութիւններ, ու մէկ քանիին ջղային ակարութիւններ : Ու սորված եմ ես թէ մեծագոյնին շահը կը պահանջէ որ փոքրագոյնը գոհուի : Ու այդ փոքրագոյնին մէջէն են եղած ԺԹ. դարու յոռետեսները, որոնք յոռետեսութիւնը դաւանած են իբր փիլիսոփայական վարդապետութիւն մը :

Առաջին յոռետեսները բանաստեղծները եղած են, որոնք վայրկենական ազդեցութեան մը տակ առած են կեանքը, լացած են ամէն բանի վրայ. բայց արցունքները՝ ցաւերէ ծնած, չեն կրնար նկատուիլ յոռետես արտադրութիւններ : Հին բանաստեղծներու գործերուն մէջ կը գտնենք օրինակներ տխուր բանաստեղծութեան, վայրկենական ու անցողակի յոռետեսութեան. Հեղիոդոսի, Հոմերոսի եւ ուրիշ շատերու գործոց մէջ կան արցունքոտ երեսներ, յոռետես տողեր. բայց հիներուն ոչ յոռետեսութիւնը եւ ոչ ալ հոգեկան տխրութիւնը, չէին կրնար մանել ամբոխին մէջ, որ ուրախութեան ու հաճոյքներու մէջ կը գտնէր կեանքին պատճառը :

Սակայն գտնուած է փիլիսոփայ մը, Հեղեսիաս անուն, որ ճշմարիտ յոռետես մը եղած է, ինչպէս չէ երեւակայած արդի յոռետեսութեան հայրը, Շօքէնհաուէր : Հեղեսիաս, առած է կեանքը, առած ամէն բան որ իր շուրջը կ'ապրէր, ու մահուան ծոցը փնտռած է սփոխանքը կեանքին : ու քաջութիւնը ունեցած է անձնասպան ըլլալու. ինքզինքը օրերով անօթի ձգելով : Այդ առաջին յոռետեսը եթէ մեր օրերուն ապրէր, յիմարանոցի մը մէջ պիտի խնամէին զինքը, ինչպէս կը խնամեն բոլոր անձնասպան ըլլալու փափաք ունեցող ու անձնասպանութեան փորձեր ընող խեղճերը :

Հեղեսիասէ զատ չգտայ հին գրականութիւններու մէջ, փիլիսոփայական հին աշխատութիւններու խորը ուրիշ մը որ ներկայանայ իբր ճշմարիտ յոռետեսի մը ափսոսք : Բանաստեղծներու հանդիպեցայ, որոնք ինչպէս ըսի, լացած են միայն ատեն ատեն, որովհետեւ բանաստեղծը որ զգացումներու ու խոհերու մէջ միայն կը գտնէ գոյութեան նպատակը, եւ որուն հոգիւնը զուտ մտաւորա-

կան է, չի հասկնար աշխարհի կեանքը, ու չուզեր համակերպիլ անոր. ամէն բան իր փափաքներուն, իր իղձերուն համեմատ կարգադրուած տեսնել կ'ուզէ, ու ամէն օր, կ'ունենայ յուսախափութիւններ, յուսահատութեան վայրկեաններ: Երկտասարդ բանաստեղծը որ չի գտներ ապրելու դիւրութիւններ, ու կը տեսնէ թէ իր արտագրութիւնները, իր երկերը չեն գտներ իր փափաքած ընդունելութիւնը կը տխրի, կ'արտասուէ, ու ողբերու անհատնում ձայներով կը թրթռացնէ իր քնարը: Եւ սակայն յոռետեսութիւն չէ ատիկայ, այլ վայրկենական տխուր բանաստեղծութիւն մը:

Աշխատողը կեանքին մէջ կը հանդիպի ամէն վայրկեան դժուարութեանց, որոնց յաղթելու համար իր մէջը կը գտնէ պէտք եղած կորովը, եւ յուսահատութիւնը՝ վերջնական յուսահատութիւնը չի մտնիր անոր հոգիին մէջ. կը տխրի խոչընդոտին դիմաց բայց չի յուսահատիր, որովհետեւ կամքը պիտի չաղթէ խոչընդոտին: Բանաստեղծը, որ կեանքին ամէնէն տղտիկ պարագաները կը սիրէ նկարագրել, կ'արտադրէ տխրութեան ու յոռետեսութեան նմոյշներ, որոնք սակայն չեն կրնար նկատուիլ ճշմարիտ յոռետես ուղեղի մը երկունքը:

Համբէ՛ ուրախութեան վայրկեանները,

Համբէ՛ առանց մտմտութի օրերը,

Ու ով որ ալ ըլլաս, գիտցիր՝

Աւելի աղէկը կայ, — չըլլալը:

Կը գրէ Պայրըն:

«Ով տէր, յաճախ զղջացի ծնած ըլլալուս, կ'ըսէ Լամարդին, յաճախ փափաքեցայ ոչընչութեան մէջ մխրճիլ, անցնիլ երթալ այսքան սուտերու մէջէն, այսքան ցաւերու ու կրկին կորուստներու ընդ մէջէն, անցնիլ երթալ գէպի մեծ կորուստը զոր մահ կ'անուանեն:» Բայց Լամարդին բոլոր բանաստեղծներուն պէս անձրեւի ու փոթորիկի օրերէն յետոյ պայծառութեան ու գերբնական հանդարտութեան ժամեր ալ ունի ու կը հասկնայ թէ կեանքը նպատակ մը ունի. «եթէ չէք սիրած, չէք հասկցած կեանքը:» Ուրիշ տեղ մը, կատարելապէս համոզուած թէ իր արխութեանց պատճառը ոչ երկիրն եւ ոչ ալ տիեզերքն է, կը գրէ՝ «կեանքը դրօշմած էր

էութեանս վրայ երջանկութիւն, առոյգութիւն, առողջութիւն. ժամանակը, կրթութիւնը, սխալները, մարդիկ, ցաւերը դանդեցին այդ ամէնը. բայց միայն զանոնք կը մեղադրեմ ու գլխաւորաբար զիս»:

Բացատրութեան պէտք չունին այս տողերը:

Կրնայի շատ մը օրինակներ բերել, բանաստեղծութիւններ յիշել, ուր պիտի գտնէ յիշ մահուան անուշութիւնը, ոչնչութեան անհուն քաղցրութիւնը անմահացնող ու սարսըռացնող տողեր: Պիտի տեսնէիք թէ ամէն ժամանակի մարդիկ, Հոմերոսէն մինչեւ մեր օրերը, ունեցած են իրենց ողբերը, տխրութեան վայրկեանները, հոգիի ու սիրտի ցաւերը, թէ ամէն կլիմայի տակ մարդիկ լացած են կեանքը: Բայց պիտի ցոյց ապի ես ձեզի թէ այդ նուազկոտ նուագներուն քով գոյութեան երջանկութիւնը երգող տաղեր ալ կան, սիրոյ կեանքը, ու կեանքին սէրը փառաբանող ովսանաներ, զորս չեն կրցած ջրել տխուր վայրկեաններու արտայայտութիւնը եղող մէկ քանի ողբեր: Բոլոր բանաստեղծները յոռետեսներ չեն եղած: Ու հոս պէտք է դնենք որոշ սահմաններ ճշմարիտ յոռետեսութեան՝ հիւանդութեան, ու տխուր բանաստեղծութեան մէջ. Մէկ գրիչով պէտք չէ մրտննք բոլոր աւելի կամ պակաս տխուր գրողները: Անոնց մէջ գոյնի, զգացումի, արտայայտութեան զանազանութիւններ կան. գտնենք այդ յատկազոյժները, ու չչփոթենք յոռետեսութիւնը, տխուր բանաստեղծութեան ու գլխաւորաբար հիւանդ գրականութեան հետ:

Ուրիշ յոգուածով մը, որ Մաւիսի մէջ երեւցաւ, բացատրեցի թէ ինչ կը հասկնայի հիւանդ գրականութիւն ըսելով: Աւելի չեմ ծանրանար այդ կէտին վրայ: Բայց բուն յոռետեսներուն անցնելէ առաջ կ'ուզեմ բառ մըն ալ աւելցնել որպէս զի բժշկական տեսակէտով, իրարմէ տարբեր սա երեք գրագիտութիւնք չչփոթուին:

Յոռետեսութիւնը ճշմարիտ հիւանդութիւն մըն է, յոռետեսը կեանքը աւելորդ կը գտնէ ու գոյութեան ու չգոյութեան վրայ փիլիսոփայական վարդապետութիւններ կը կերտէ:

Հիւանդ գրականութիւնը յոռետեսութեան

քայրն է, կը նկարագրէ աշապուճուկի պատմութիւններ, ահերու, վախերու, մղձաւանջներու նկարագրութիւններ, մարմինդ փուշ փուշ ընող առասպելներ, ուր ջղային դրութիւնը ամէնէն մեծ դերը կը խաղայ:

Առաջինին մէջ ուղեղն է հիւանդ, երկրորդին մէջ ջիւղերը:

Առաջինին բանականութիւնը, տրամաբանութիւնը հիւանդ է, երկրորդին երեւակայութիւնը:

Իսկ ամբողջ գրականութիւնը զգացումներու արտայայտութեան չափազանցութիւնն է:

զգացումի չափազանց նորութիւն, որ եթէ չունի ճշմարիտ պատճառներ, խորունկ սուգ մը, մերժուած սէր մը, ու միայն բնական յակումի մը արդիւնքն է, կրնայ ըլլալ առաջին քայլը հիւանդ գրականութեան դոր՝ իր կարգին՝ յոռետեսութեան կը մղէ:

Կը գնեմ այս սահմանները գիւրացնելու համար բացատրութիւնս, որովհետեւ իրականութեան մէջ, այդ երեք տարբեր, բայց ազդականութիւն ունեցող գրականութիւնները շատ անգամ իրարու կը խառնուին ու կ'արտադրեն յոռետես, հիւանդ ու ամբողջ բանաստեղծ մը: Աստուած մեզ ատանկներէն պահէ:

ԲՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ



ԱՆԻՆ արուեստագիտական արտայայտութեան մէջ՝ հայ ցեղին հնագոյն յատկանիշներէն մին եղած է բանաստեղծութիւնը, եւ ասոր մէջ գլխաւորապէս տիրական հանդամանքներով երեւան եկած է քնարերգական զգացումը՝ զոյգ զիւցաղներդականին: Խորենացին՝ զիւցաղներգական բանաստեղծութեան փայլուն արտադրութիւն մը կրնայ նկատուիլ ապահովապէս:

Սկսելով գողթան երգերու հատակոտոր գոհարներէն մինչեւ շարականներու գանձերը, մեր ձեռքին տակ ունեցած գործերը լիովին կը հաստատեն այս կարծիքը: Հայ ժողովրդային բանահիւսութեան ուսումնասիրութիւնն ալ կը ծառայէ վճռաբար հաստատելու սա իրողութիւնը թէ, քնարերգական զգացումը հայ ցեղին հոգեկան տրամադրութիւններուն գլխաւորներէն մին է եղած իրօք:

Թրքահայերու նոր աշխարհիկ գրականութեան մէջ ալ, բանաստեղծութիւնը գլխաւորապէս երեւան եկած է քնարերգութեան ձեւին ներքեւ: Պէշիկթաշեան, Դուբեան, Նարպէյ, Աճէմեան, Ժամանակակից հայ գրականութեան արժանաւորագոյն բանաստեղծները, առաւելապէս քնարերգակ բանաստեղծներ եղած են: Բանաստեղծութեան ուրիշ սեռերն ալ թէեւ ունեցած են իրենց ներկայացուցիչները, բայց, ըստ իս, ո՛չ այնքան արժանաւորապէս, ու պատուաբեր յաջողութեամբ:

Քնարերգական զգացումը՝ իր զարգացման անկման շրջաններն ունեցած է մեր մէջ, — երեւոյթ մը՝ որ կրնայ բացատրուիլ հայ ժողովրդի կեանքի պատմական պայմաններուն ուսումնասիրութեամբ:

Այդ զգացման անկումի պարագայ մըն է, զոր կ'ուզեմ մատնանիշ ընել նաեւ մեր այսօրուան գրական շարժումին մէջ:

Առաջին ակնարկով պիտի կարծուի թէ սխալ համոզում մըն է մեր առաջ քաշած: Յայտնի է որ մեր պարբերական թերթերը

ամէն օր ոտանաւոր ու արծակ քերթուածներ
կը հրատարակեն , եւ եթէ հանդէսներու զըր-
կուած բոլոր ոտանաւորներն ալ հրատարակե-
լու հաճոյակատարութիւնը չպակսէր մեր խըմ-
բագիրներուն , տարին տասներկու ամիս
անընդհատ՝ մեզի ստանաւոր հրամցնել անկա-
րելի չպիտի ըլլար ասպանովաբար :

Բայց եթէ կայ զուգահեռական իրողու-
թիւն մը՝ հակադրօրէն վերեւ նշանակուա-
ծին , սա՛ է թէ՛ մեր ընթերցող հասարակու-
թիւնը ամէն ժամանակէ աւելի քիչ կը կար-
դայ ոտանաւորը , եւ աւելի քան երբէք տղա-
յական ու թռուցիկ նշանակութիւն մը կու-
տայ անոր :

Այս պարագան , ըստ իս , երկու պատճառ-
ներով կարելի է բացատրել : Առաջին , —
բանաստեղծութիւնը իր բնութեամբն իսկ ,
ժամանակիս անտեսական հանգամանքնե-
րուն հետ տեսակ մը անխնամութիւն ունե-
նալ կը թուի : Գարուս գրական ու ընդհան-
րապէս մտաւորական ոգին , քաղաքակրթու-
թեան ներկայ պահանջներուն համաձայն ,
փոխուած է : Խորհող միտքերու նորագոյն
մտահոգութիւնները , գրագէտներու տրամա-
դրութիւնները , ուղղակի կը բղխին դարուս
ընկերական ու տնտեսական պայմաններուն
ծոցէն : Այդ պայմանները , իրենց բնութեամբն
իսկ , ներկայ ընկերութեան մէջ , անհատին
զգացումներէն աւելի՝ զատողութիւնը զբա-
ղեցնելու հանգամանքն ունին : Գաղափարին
տիրապետութեան մէջ , խնդրուած է զգա-
ցումը , — գլխաւոր աղբիւր քնարերգական
բանաստեղծութեան : Այսպէսով , բանաստեղ-
ծական զգացումը եթէ ոչ բոլորովին սնան-
կացած , — բան մը՝ որ հոգեբանօրէն ան-
կարելի է , — գէթ ընթարմացած է բոլոր եւ-
րոպական գրականութիւններուն մէջ : Ռօ-
մանթիզմի քնարին տիեզերական ճախրանքով
թրթռումները դադրելէն ի վեր , Լամառթին
եւ Հիւկօ իրենց յաջորդները չունեցան : Ան-
շուշտ արձակին տիրապետութիւնն ալ թե-
թեւօրէն չմտասեց բանաստեղծական զգացու-
մին , որուն նուիրագործուած արտայայտու-
թեան ձեւը՝ ոտանաւորն է եղած մանաւանդ :
Ասոնց բոլորը բնաւ չի նշանակեր անտարա-
կոյս թէ , խօսելով զոր օրինակ Ֆրանսական

գրականութեան վրայ , որ ամէնէն աւելի
ծանօթն է մեզի , ճշմարիտ տաղանդներու
բացարձակ սովի մը մէջ գտնուինք այսօր :
Ասիկա սխալ ենթադրութիւն մը պիտի ըլլար ,
վասնի զի ասպանովաբար Բօլ Վէռլէն , որ դեռ
հերոս մեռաւ , պզտիկ բանաստեղծ մը չէր ,
ու այսօր , Էմիլ Վէռլանը , որ փրանսերէն
զրոյդ Պելճիքացի բանաստեղծ մըն է , միջակ
տաղանդ մը չէ ստուգիլ : Այսու հանդերձ ,
նշանաւոր քննադատներու կարծիքով , Ֆրան-
սայի արդի բանաստեղծութիւնը չունի դեռ
իր որոշ , իր տիեզերական զրոյշմը , ու հան-
ճարը , որ այդ զրոյշմը պիտի քանդակէր անոր
վրայ , տակաւին ինքզինքը փնտռել կուտայ :
Բանաստեղծութեան հետ անոր ներկայա-
ցուցիչներն ալ այսօր շատ բան կորսնցուցած
են իրենց երբեմնի հմայքէն , հանդէպ հասա-
րակութեան :

Երբեմն անոնք կիսատուածներ , մարգա-
րէներ , հաղուագիւտ էակներ էին , պահելով
հասարակ ժողովրդին հանդէպ տեսակ մը մե-
կուսացած անմերձեանալի բարձրութիւն : Աս-
պարէզն ինքնին նուիրականութեան զրոյշմն
ունէր , պաշտամունք ու երկիւղած խանդա-
վառութիւն հրաւիրող , Այսօր մինչդեռ , բա-
նաստեղծը , իջած իր երբեմնի պատուանդա-
նէն , անիծապարտ միամիտ մանուկ մըն է ,
թեթեւօրէն գնահատելի ու տարտամօրէն մի-
այն սիրելի , — անտեղեակ անմիջական իրա-
կան կեանքին պէտքերուն ու սգէտ ժամա-
նակին անտեսագիտութեան նրբամտութիւն-
ներուն : Այս վիճակը երբեմն իր գնահատու-
թիւնն էր , այսօր՝ իր դատապարտութիւնն է
ան :

Բանաստեղծական զգացումին նուազման
պատճառները պրպտելով դեռ պիտի կրնայինք
տեսնել թէ , քնարին բլրաւոր թելերուն
վրայ , որոնք ամէնքն ալ թրթռացած են
դարերէ ի վեր , նորագոյն նօթեր , նորագոյն
թրթռումներ գտնել՝ իրական տաղանդի գործ
պիտի ըլլար : Հասարակութիւնը սովորական
եղանակներէն ձանձրացած է ալ , ու իր ա-
կանջը կը խցէ անոնց : Այսօր ճաշակները
տարբեր ուղղութիւններ են առած : Գրահմուտ
հասարակութեան դժուարահաճութիւններուն
առջեւ՝ բացառիկ նորութիւններն են որոնք
չնորհ կրնան գտնել :

Մեր հասարակութիւնն ալ, անտարակոյս, դարավերջին այս հոգեկան ու մտաւոր ընդհանուր տրամադրութիւններէն չէր կրնար անմասն մնալ :

Երկրորդ պատճառը՝ բոլորովին մասնաւոր է մեզի համար :

Յորմէհեաէ մեծ տաղանդները մարեցան, ոտանաւոր գրել՝ ամէն գրիչ շարժողի համար, աչառ չ կտարած նորութիւն մը դարձաւ : Գրական առպարէղին բոլոր սկզբնաւորութիւնները ոտանաւորով տեղի կ'ունենային, ու ոտանաւորը, քնարերգութիւնը, գրական սեռերու ամէնէն դիւրինն ըլլալ սկսելով, դարձաւ ամէնէն միջակը, ամէնէն ռամիկը : Եւ իրօք, ի՞նչ բան աւելի դիւրին՝ քան չարափոխել Դուբանն ու Պէշիքթաշեանը, իրարու խեղճօրէն կարկտել քանի մը բրդուճ յիշակուտեր (réminiscence) մկրատել քանի մը կազ յանգեր, կուտակել անիմաստ խառնաձայնութիւններ, ոտանաւորի պատրուակով : Այս եղած է մեր նորեկ բանաստեղծներուն յատկանիշը : Պէտք է հոս աւելցնենք նաեւ ֆրանսական գրականութեան թուղցիկ մասին կործանարար ազդեցութիւնը : Բանաստեղծութեան դատական նիւթերէն, վարդերէն, զեփիւռներէն, թիթեռներէն, արշալոյսներէն ու սիրային յուսահատական ձայնարկութիւններէն յետոյ, որոնք այնքան չունչ հատցնել տուած են համբերող ընթերցողներու, նոր բանաստեղծներէն ոմանք բոլորովին կեղծ պաշտասեան ուղղութիւն մը տուին հայ քնարերգութեան : Նորութեան, անակնկալի, եւ խակատպութեան տենչանքով, Պօպէսի, Ռիչարէնի եւ նմաններու գործին անձաշակ ու անողի ընդօրինակութիւն մը՝ շատերուն փառքը չինեց : Ներշնչումը, որ հիմնական պայման է որ եւ է բանաստեղծական մաքուր արտադրութեան, բոլորովին վտարուեցաւ, ու բառերու անձարակ արուեստ մը յաջորդեց անոր, ձեւին ու արտաքին յարդարանքին մտահոգութեամբ : Զգացում, գաղափար, խանդավառութիւն, տղայական բաներ, որ եւ է արժէք չունէին այլ եւս : Բանաստեղծը, ցուրտ ու անտարբեր,

Աւելի ցուրտ՝ քան հողաքարին իր ոսփին, նկատողութեան չէր կրնար առնել Բանին

ներքին կենսունակ ջերմութիւնը, որ բանաստեղծական որ եւ է գործի խսկութիւնն ու կեանքի աղբիւրն է, անկախաբար ձեւէն ու արտաքին յարդարանքէն : Եթէ այս սխալ հասկացում ու գէշ ընդօրինակում պաշտասամուլութիւնը մեզի տուած ըլլար գէթ Սիւլլիւ Բօիւտօմի կամ Քօքէի աշակերտ մը, վնաս չունէր :

Այս ուղղութիւն է որ մինչեւ այսօր կը շարունակուի մեր օրուան քնարական բանաստեղծութեան մէջ : Հասարակութիւնը, արդարապէս շահագրգռուած կենսական ու ծանրակշիռ կարեւորութեամբ հարցերով, եւրեսը չի նայիր այդ գրեթէ միշտ անհամ, տափակ աղքատութիւններուն, որոնք երբեմն տաղակալի խառնաձայնութեամբ տրտաացուած չինարէներ են մեզի համար :

Այս ուղղութեան տրամաբանական շարունակութեան գաղափարին վրայ յենլով, եթէ զուշակութիւն ընել ուզենք մեր մէջ քնարերգութեան ապագային, պիտի կրնանք ըսել թէ անիկա օր ըստ օրէ սովորութեան դատապարտուելու է վիճակուած : Խոտոր ու սխալ ճամբաներ ընտրած ենք ու մշակութեան գաշալը, այս սահմաններուն մէջ, երկարժամանակայ շահագործումէ մը յետոյ, չա՛տ անպաղաքեր ու ամուլութեան դատապարտուած ըլլալ կը թուի :

Հայ բանաստեղծութեան այլասեռումին այս պարագան հաստատել ու անոր պատճառներուն մէկ մասը քննելէ յետոյ, ինքնին կը ներկայանայ այս մասին դարման մը խորհելու հարցը :

Իմ մասին, ես բոլորովին չարագուշակ չեմ Հայ քնարերգութեան ապագային նկատմամբ : Նախ՝ վասն զի, արուեստի սահմանին մէջ, նիւթերը չեն որ կը հիննան էպպէս, այլ տաղանդներն են որ կ'այլասեռուին : Արուեստի արտադրութեան մը գերադոյն հրապոյրն ու խակատպութիւնը՝ կը կայանայ գլխաւորաբար այն կերպին մէջ՝ որուն համեմատ արուեստագէտը կը թարգմանէ իր նիւթերը : Ըստ իս, իրական տաղանդներն են որ ամէնէն աւելի կը պակսին մեր գրականութեան : Քանի մը տաղանդի սաղմեր ալ եթէ գոյութիւն ունին, անոնք ալ ապահովաբար այլա-

սեռա՛յ են, պարզուած օտար ազդեցութիւններուն ներքեւ :

Իմ խորհած զարմանն է՝ բոլորովին նոր ուղղութիւն մը տալ հայ քնարերգութեան :

Այս ուղղութեան գոյութեան իրաւունքն ու աղբիւրները գտնելու համար, անհրաժեշտ է դառնալ նորէն մեր «Գաւառական գրականութեան» ծանօթ ծրագրին : Զուտ գաւառական գրոյ՛մ ու ծագում ունեցող նիւթերուն կուզեմ ակնարկել : Գրեթէ յանկերգ մը եղաւ վերջերս ամէնուն բերնին մէջ՝ թէ գաւառը բանաստեղծութեան գանձեր կը պարունակէ իր ծոցը : Բանաստեղծելու, քնարերգելու սովորական ռամիկ ճամբաներէն ետ դառնալով եթէ ուսումնասիրենք գաւառին մեզի տուած տարրերը, իրօք պիտի տեսնենք թէ սխալած չպիտի ըլլանք :

Գաւառացի բանաստեղծներու համար աշխատութեան ծրագիր մը կազմած ատեննիս, պէտք է դնենք նախ աւելի կամ նուազ տոհմային նկարագիր ու հեթանոսական գրոյ՛մ ունեցող հէքեաթներու լաւագոյններուն ստանաւորի վերածումը : Բանաստեղծները, այս սահմանին մէջ, առատ ու թանկագին նիւթեր պիտի գտնեն իրենց տաղանդին աստիճանը փորձելու :

Բանաստեղծական ներշնչման աղբիւրները, ժողովրդի ջերմ ու կենդանի ծոցէն քաղուած, հիւսիսի գրականութիւններուն մէջ հիանալի գլուխ-գործոցներու ծնունդ տուած են : Շատերուն ծանօթ են Շիրիլէրի, Կէօթէի, Միգրիէվիչի գեղեցիկ պալլատները, Անտէրսընի հիանալի հէքեաթները : Անծանօթ չէ նաեւ Ամերիկացի մեծ բանաստեղծ Լօնկֆելտի Էվանճելիս քերթուածը, որուն նիւթը ժողովրդային կեանքէն առնուած միամիտ ու մաքուր ներշնչումներով աւանդութիւն մըն է : Դիտենք նմանապէս՝ թէ Վալկնէր իր հռչակաւոր երաժշտական քերթուածներուն բանաստեղծութիւնը հանած է մէկ մասով ժողովրդային աւանդութիւններէն :

Քննադատներու կողմէն յաճախ մատնանիշ եղած են այն հանդիտութիւնները, զոր բանասիրութիւնն ու ազգակրօնական խուզարկութիւններ երեւան բերած են՝ անգլո-գերման ցեղերու եւ մերինին՝ ցեղային առանձ-

նայատկութիւններուն մէջ : Բանաստեղծական ներշնչման տեսակէտէն մենք աւելի մօտ եղած ենք հիւսիսային ազգերուն՝ քան յունա-լատին ցեղերուն, թէեւ, սկիզբէն ի վեր, այս վերջիններուն ազդեցութիւնը կրած ըլլանք մասնաւորապէս : Զգացման տեսակէտէն, ամէնէն խորունկ բանաստեղծութիւնը, ինչպէս ուրիշներ մասնանիշ ըրած են, Դէնի կարծիքով, անգլիականն է եղած, Փոստասկանին վրայ՝ որ աւելի ձեւն ու արտաքին յարդարանքները նախասիրած է : Նմանութեան այս պարագաները, զոր ազգագրութիւնը երեւան հանած է մեր ու անգլո-գերման ցեղերուն նկարագրին մէջ, հարկ է մըշակուին, իբրեւ մեր տոհմին բնատիպ ու ամէնէն հարազատ առանձնայատկութիւնները :

Դէպ ի տօհմային նկարագիր ունեցող այս հոսանքը ցոյց տրուելիք համակրութեան բարոյա-իմաստասիրական արժէքն ալ, չպտ բարձր կարեւորութիւն ունի մեզի համար : Մեր հին մատենագրութեան անկեղծ ուսումնասիրութիւնը, եւ մասնաւորապէս ժողովրդային անգիր դպրութեան գանձարանին քննութիւնը մեզի կը սորվեցնեն թէ՛ մեր ցեղը կարծուածին չափ լալկան ու կեանքի նկատմամբ ժխտական տրամադրութիւններով թրխուած հոգի մը չէ ունեցած : Իր գրականութեան, գլխաւորապէս իր բանաստեղծութեան մէջ խտացած իմաստասիրութիւնը՝ էապէս չըլլալով հանդերձ միամիտ լաւատեսութեամբ իմաստասիրութիւն մը, կը յատկանշուի գլխաւորաբար տեսակ մը մեղամաղձոտ սէրով՝ դէպ ի Կեանքին ստորասական բարերար բղխումը : Համաստեղծեան ու բնապաշտ լայնածուալ ոգի մը կայ հոն : որ բնութեան բաբախուն երակներուն, Անոր կենսապարար առատաբուխ արգանդին նկատմամբ խանդակաթ պաշտամունքով մը երեւան կուգայ : Այս պաշտամունքին կեդրոնն է գլխաւորապէս Արեւը, — Լոյսը, — անչէջ վառարան Կեանքի յաւիտենական բարի բըզխումին :

Քաղաքակրթութեան պատրուակներ, սկսելով քրիստոնէական թուականներէն, որքա՛ն հեռացուցած են մեր ցեղի հոգին՝ մաքուր բղխումի այդ վճիտ ակունքներէն :

Յառաջացած ապաստեռումը մինչև իսկ լա-
կանութեան տխուր համբաւ մըն ալ չինած է
մեզի :

Ահա՛ ուրիմն ամենակենսական եւ ամե-
նալուրջ աստիճանի կարեւորութեամբ պատ-
ճառներ, որպէս զի վերակենդանացնեք ցեղի
էական ոգին, քնարերգական զգացման գլխա-
ւոր ազդակը, ընտելեան ու կեանքին սէրը,
վերադառնալով ժողովրդային բանահիւսու-
թեան նախնական ոգիին :

Նոր քնարերգութեան արուելիք այս ուղ-
ղութեան իրրեւ զօրաւոր պատճառ՝ կայ ան-
դին ամբողջ «գաւառական կեանք»ը, իսկա-
տիպ, առանձնատիպ՝ իր գոյներով, իր պատ-
կերներով, իր միջավայրովն ու անոր մէջ ե-
րեւան եկող կեանքի արտայայտութիւններով:
Այդ գաւառական կեանքը այնքա՛ն ընկերա-
բանին, ազգագրին, վիպասանին՝ որքան բա-
նաստեղծին համար ունի անհատնում նիւթեր,
որոնք կը սպասեն շահագործուիլ :

Յրանայի արդի գրականութեան մէջ
Բոսլանցի բանաստեղծները կարեւոր տեղ մը
գրաւած են : Յրանուա Քօթէն՝ գաւառական
կեանքէ պատկերներ, ժողովրդային պարզու-
նակ կեանքէ յուզիչ ու թանձր զգացումով
տառամներ խտացուցած է իր քերթուածներուն
մէջ՝ որոնք իր փառքը կը չինեն : Զուտ անձնա-
կան բանաստեղծութեան կեղեւը՝ մեծ մասով
միջարկութիւններ պարտկած է : Բարձրագոյն
տաղանդները միայն այդ փափուկ ու դժուա-
րին սահմանին մէջ կրցած են անմահանալ :

Պարզ է որ այս համառօտ նկատողութիւն-
ներուն սահմանէն դուրս կը մնայ խնդրին ա-
ւելի մանրակրկիտ ու մասնագիտական ու-
սումնասիրութիւնը՝ զոր կը թողում աւելի
ձեռնհասներուն :

Ես ջանացի միայն նոր ուղղութեան բը-
նութիւնը սահմանել, իր ընդհանուր գիծե-
րուն մէջ : Վստահ եմ սակայն թէ՛ այս ծրագ-
րին գործադրութիւնը դարագլուխ պիտի բա-
նայ հայ քնարերգութեան :

ԿԱՆԱՅ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՄԷՋ

ԴԷԹԷ ՇՐԻՄԱՆԸՐ

Անգլիոյ բովանդակ ժուրնուրդն է 37 մի-
լիոն 880,764 : Ամբողջ բնակչութեան մէջ կի-
նեռու քիւն է 19 միլիոն 496,638 իսկ այրե-
րունը 18 միլիոն 384,126 :



ՆԳԼԻԱ. եւ Սկովտիա իրրեւ
բարգաւաճ եւ մշակուած եր-
կրներ կը ներկայացնէին յարմար հող մը կա-
նանց շարժումին զարգացման համար : Անգլու-
հիները եւ Սկովտուհիները, մաքառման ա-
տեն փոխադարձ կերպով միշտ իրարու օգ-

նած են, եւ մէկ կողմին տարած յաղթանակ-
ներէն օգտուած է նաեւ միւս կողմն ալ :

Նախաձեռնութիւնը սակայն Անգլիաէն
կուգայ, մանաւանդ քաղաքական տեսակէ-
տէն, որու մասին պիտի խօսինք :

Մէրի Ուօլսթօնքրաֆթ անգլուհին, 1792ին
հրատարակելով իր Vindication of the rights
of Woman (պաշտպանութիւն կնոջ իրաւունք-
ներուն) նուիրագործեց կանանց շարժումը
Անգլիոյ եւ գրեթէ ամբողջ Եւրոպայի մէջ :

Մէրի Ուօլսթօնքրաֆթ յանուն մարդկային
ազատութեան եւ արդարութեան հռչակեց
երկու սեռերու հաւասարութիւնը :

Ինքն էր որ հիմնուելով 1789ի սկզբունք-

ներուն վրայ , խիստ լեզուով մը կը պահանջէր գործնական բարեփոխումներ դաստիարակութեան եւ քաղաքային պատժական եւ հանրային իրաւանց համար , եւ զորս մինչեւ այսօր կանանց շարժումի կուսակիցները կը փորձեն իրականացնել Մեծին Բրիտանիայի մէջ :

Vindication of the rights of Womanի հրատարակութեան թուականէն սկսելով , մշակուած Անգլիան յարատեւ կերպով զբաղած է կնոջ մտաւոր , քաղաքային եւ քաղաքական ազատագրութեան խնդրով :

Այս դարու առաջին քառորդին մէջ , հանձարեղ մարդ մը , Շէլլի բանաստեղծը կը յայտնուէր կանանց շարժումի մասին իր համակիր գաղափարներովը եւ ամէնէն առաջ ինպատակ կը խօսէր կնոջ սորվելու իրաւունքին :

Բայց հակառակ ասոր , այն ժամանակները անգլիական կարծիքը , իր մեծամասնութեան մէջ հակառակ էր կիներու մանաւանդ քաղաքային եւ քաղաքական ազատագրութեան :

Զարմանալի է որ մեծամասնութեան այս կարծիքը իր պաշտպանը կը գտնէր յանձին Ճէյմս Միլլ պատմաբանին , որուն որդին սակայն , անուանին Ճօն Սթիւըրտ Միլլ իբր ամէնէն հզօր պաշտպանը կը ներկայանար կիներու իրաւունքներուն :

Ճէյմս Միլլ Բրիտանական Հանրագիտարանի (Encyclopedia Britanica) 1824ի տպագրութեան մէջ , յօդուածով մը կը յայտնէր թէ կանանց մեծագոյն մասին շահերը ձուլուած են իրենց հայրերուն , եղբայրներուն , ամուսիններուն շահերուն հետ եւ թէ այս պատճառաւ կիները կրնային խորհուրդարանին մէջ ուղղակի ներկայացուցիչ մը ունենալու գաղափարէն ետ կենալ :

Սակայն 1825ին Թոմսըն եւ Միսիս Հուիլըր կը պատասխանէին այդ յօդուածին գրեթով Appeal to Women (կոչ մը կիներուն) :

Այս գրութեան հեղինակները կը չեչոտէին սա կէտը թէ կարգ մը կիներ — ընտանիքի գլխաւորը եւ հարկատու — որոնց շահերը ներկայացնող հայր մը , եղբայր մը կամ ամուսին մը չկար , բնականաբար պէտք էին իրաւունքը ունենալ մասնակցելու համար քաղաքական ընտրութեան : Որովհետեւ շատ ծանօթ անգլիական սկզբունք մը կ'ըսէ . No taxation

without representation (չիկայ հարկատուութիւն մը առանց ներկայացուցիչ ունենալու) : Այս սկզբունքը Ճօն Սթիւըրտ Միլլն էր որ կուտար , եւ որ յետոյ իր ըսելիքներուն իբր հիմ կը ծառայէր :

Իր շատ մը գործերուն մէջ Միլլ պաշտպանած է կնոջ իրաւունքները . բայց իր ամէնէն կարեւոր գործը այս ուղղութեան մէջ , եղած են 1865էն 1869 անգլիական խորհուրդարանին մէջ բացած իր վիճաբանութիւնները ինպատակ կիներու քաղաքական իրաւունքներուն :

Կանանց ազատագրութեան գաղափարը 1792էն ի վեր մեծ յառաջդիմութիւններ ըրած էր արդէն անգլիական հասարակութեան մէջ : 1866ին ալ կը կազմուէր առաջին ընկերութիւն մը կիներու ընտրական իրաւունքին համար , Լոնտոնի մէջ , որ խորհրդարանին կը ներկայացնէր 1429 ստորագրութիւններով հանրագրութիւն մը եւ կը խնդրէր սեփականատէր եւ հարկատու կանանց համար քաղաքական ընտրողութեան իրաւունք :

1867ին , Ճօն Սթիւըրտ Միլլ , նախագահը Լոնտոնի այս National Society for woman suffrageի , որ իր գաւառներուն մէջ արդէն 46ի չափ ընկերութիւններ կազմած էր , վերջին հարուած մը տուաւ : Անգլիական խորհրդարանին մէջ ընտրական օրէնքի վերաքննութիւն մը առաջարկուած ըլլալով , 1867 Մայիս 20ին , Միլլ պահանջեց նաեւ քաղաքական ընտրողութեան իրաւունք տալ կիներու այն դասակարգին , զոր քիչ մը առաջ մասնաւոր ըրինք : Սթիւըրտ Միլլի այս առաջարկութիւնը սակայն կը մերժուէր 83ի դէմ 169 ձայնով : Եւ սեփականատէր ու ընտանեաց գլուխ եղող կիներ որոնք Միլլի խորհրդարանին մէջ ըրած առաջարկութեան վրայ կը փորձէին քուէարկութիւններուն մասնակցել , կը տեսնէին որ իրենց քուէները կամ կը մերժուէին եւ կամ կ'ոչնչացուէին :

Կարելի է ըսել որ 1869էն ի վեր Անգլիական խորհրդարանը չէ ունեցած նստաշրջան մը որ անցած ըլլայ , առանց կիներու քաղաքական ընտրողութեան մասին առաջարկ մը լսած ըլլալու :

Կլատսթըն եւս , 1883ին կիներու խնդիրը

ձեռք առաւ : Այս առթիւ ինքն էր որ շեշտեց թէ անգլիական սեփականատէրերուն մէկ եօթերորդը կրնան էին . թէ 20000 կրնան , ազարակներ կը բանեցնէին , թէ 3 միլիոն ամուրի եւ 100000 ամուսնացած կրնան իրենց աշխատութեամբ կը ճարէին իրենց հացը , հարկատու էին եւ կրնային այս պատճառաւ օգտուիլ ընտրողական իրաւունքէն : Սակայն Սթիւըրտ Միլլի պէս կ'աւանդէր եւս արդիւնքի մը չէր հասնէր :

Բայց ընտրողական իրաւունքին շուրջ եղած շարժումը չէր ջլատուէր , այլ տակաւ աւելի ծաւալ կը ստանար :

Արդէն 1869էն կրնան սկսած էին հանրային գումարումներ կազմակերպել եւ անոնց մէջ խօսիլ :

1884ին կազմուած ընկերակցութեան (primrose league) , որուն 40000 պահպանողական կրնան կ'անդամակցէին եւ ազատական կրնան միութեան (Women's liberal federation) շնորհիւ , 30000 անդամներէ բաղկացած , կրնան իրենց շարժումներովը եւ ատենարանութիւններովը , անուղղակի ձեւի մը տակ , Խորհրդարանի ընտրութիւններուն մէջ գործունեայ դեր մը կը ստանանէին :

Սակայն 1889ի Յունիս ամսուն մէջ , հակադիմութիւն մը երեւան կուգար : Անդրաքաղաքական (antipolitical) կրնան Հանդիս Տասներինետորդ Դարուի մէջ (Nineteenth century Review) տեսակ մը հրատարակելը հրատարակէին :

Յուլիս ամսուն մէջ , կանանց ընտրողական իրաւունքի պաշտպանները կը հրատարակէին իրենց պատասխանը Կիսամեակային Հանդիսի (Fortnightly Review) մէջ , Այս պատասխանը ստորագրողներուն մէջ ոչ միայն կը տեսնուէին անգլիական ազնուականութեան մեծագոյն անունները , այլ նաեւ Անգլիական Եկեղեցւոյ գլխաւորներէն 15 հոգիներու , Հանրային Գթութեան , դպրոցական զանազան յանձնաժողովներու անդամներուն անունները :

Վերջապէս , 1897 Փետրուար 3ին էր որ Խորհրդարանին մէջ երկրորդ ընթերցմամբ եւ 71 ձայնի մեծամասնութեամբ ընդունուեցաւ ծրագիր մը , սեփականատէր եւ հարկատու կրնան քաղաքական ընտրութեան օրէնքի

մասին : Այդ միջոցին Անգլուհիները պատճառուն էին հաւատարու որ նստաշրջանի փակումէն առաջ , երրորդ ընթերցմամբ մը ծրագիրը արդէն օրէնքի ոյժ պիտի ստանար : Բայց այնպէս չեղաւ : Տեսնելով որ Խորհրդարանը առաջարկի երրորդ ընթերցումը շարունակ կը յետաձգէր , խումբ մը ընտրողութեան պաշտպան կրնան աղերսագիր մը կը ներկայացնէին երեսփոխանական ժողովին (Chambre des Communes) որպէս զի յիշեալ առաջարկը , իր կարեւորութեանը պատճառով , նոյն իսկ Խորհրդարանի գումարման հետեւեալ օրուն օրակարգին մէջ անցուի : Առաջարկութեան կուսակիցներուն եւ հակառակորդներուն միջեւ բուռն վէճերէ ետքը Խորհրդարանը իր օրակարգին մէջ չորրորդ տեղը տուաւ այդ առաջարկին : Եւ օրակարգի գլուխը եղած առաջին երկու խնդիրներու մասին , վիճարանութիւնները դիտմամբ այնքան ձգձգուեցան , մինչեւ որ նստաշրջաններու նկատմամբ օրէնքին տրամադրած վերջը եկաւ :

Բայց Անգլուհիները ասով ալ ինքզինքնին յաղթուած չըզգային : Լաւ շրջահայեցութեամբ մը նախ յետաձգեցին կրնան շարժման այն միջազգային գումարումը որ տեղի պիտի ունենար Լոնտոնի մէջ , ասով իրենց բովանդակ ժամանակը , դրամը եւ իրենց ամբողջ ոյժը իրենց քաղաքական ծրագրի շարունակութեանը պահելու համար :

Երկրորդ , յաջողեցան 1897ի դեկտեմբերին , ազատական կուսակցութեան Տէրպիի մէջ ունեցած ընդհանուր ժողովին ատեն ձեռք անցնել անոնց միաձայն հաւանութիւնը՝ կրնան քաղաքական ընտրողութեան իրաւունքի մասին :

Վերջապէս նոր դրութիւն մը մատուցին Խորհրդարանին : Որովհետեւ իբրեւ ճշմարիտ Անկլո-Սաքսոնուհիներ համոզուած էին որ կամքի ոյժով կարելի է նպատակին հասնիլ (where is a will, there is a way) : Մանաւանդ ընաւ պատճառ չունէին յուսահատելու :

Իրաւ է թէ այսօր Անգլիոյ եւ Սկոթլանդի մէջ 500,000 սեփականատէր եւ հարկատու կրնան տակաւին զրկուած են իրենց քաղաքական իրաւունքներէն , բայց միեւնոյն կրնան գոնէ կը վայելեն 1869էն ի վեր քաղաքակրթական ընտրութեան իրաւունքը :

1870էն ի վեր կիները ընտրող եւ ընտրելի են միանգամայն , դպրոցական յանձնաժողովներու մէջ :

1888էն ի վեր կը քուէարկեն գաւառական ժողովներու (County Council) մէջ :

1894էն ի վեր կիները ընտրող եւ ընտրելի են թաղերու եւ շրջանակներու ժողովներուն մէջ (Parish and district Councils) , ինչ որ նաեւ իրենց միջոցը կուտայ հաշտարար դատաւորի պաշտօնը վարելու :

Իրլանդական ծովու ինքնիշխան կղզիի մը , Մէյնի մէջ , ուր խորհրդարանը հին ու յարգելի հաստատութիւն մըն է , սեփականատէր կիները 1881էն ի վեր կը մասնակցին նոյն իսկ խորհրդարանական ընտրութիւններուն :

Պէտք է նաեւ աւելցնել թէ կիներու ուրիշ ընկերութիւն մը , «Women's franchise league of Great-Britain and Ireland» , արմատական երեսփոխական Եաքօպ Պրայթի կնոջ կողմէ 1889ին հիմնուած , կը պաշտպանէ բոլոր կիներուն ընտրողութեան իրաւունքը ամուսնացած կամ ամուրի , հարկատու կամ ոչ հարկատու :

Սոյն ընկերակցութիւնը , իր քաղաքական գործունէութենէն զատ կը մասնակցի նաեւ կիներու շարժումի պաշտպաններու այն մաքառումներուն , որոնք նպատակ ունին կիներու երկրորդական եւ բարձրագոյն կրթութիւնը օրինական որոշ բարենորոգումներու ենթարկել :

* * *

Քաղաքական ուղղութեան մէջ եղածէն ոչ նուազ ուժեղնութեամբ անգլիական կիներու շարժումը կը յայտնուի նաեւ կրթական խնդիրներու մէջ :

Աղջկանց երկրորդական կրթութեան յատուկ հիմնադրութիւնները 1869ին շատ ողորմելի վիճակի մէջ էին , բան մը զոր այն ժամանակի թագաւորական հրամանով կազմուած յանձնաժողովի անդեկագիրները կը հաստատեն :

Այն անհատական ձեռնբեցութեան ոգին որով Անգլիա այնքան կը յատկանշուի իսկոյն բարձրագոյն ուսման ժողովներ կը կազմուէին

երկրին մէջ ամէնուրեք , եւ 1869ին , Միս Էմիլի Տէյվիս , Քէմպրիճի մօտերը Հիլընի մէջ կը հաւաքէր հինգ ուսանողուհիներ , որոնց թոյլտուութիւն կը շնորհուէր համալսարանի դասախօսութիւններուն հետեւելու :

Սակայն երթալով ուսանողուհիներուն թիւը այնքան աճեցաւ որ 1873ին Հիլընի գեղեցիկ այլ պղտիկ շէնքը բոլորովին նեղ գալուն կը փոխադրուէր Ծիրդըն , նմանապէս Քէմպրիճի շատ մօտերը , եւ հոն ընդարձակ շէնքի մը մէջ կը հաստատուէր :

Ծիրդըն ֆոլեճը , Անգլիոյ մէջ կանանց առաջին համալսարանը եղած է :

Կիներու երկրորդ համալսարանը , 1871ին հաստատուած , Միս Ան Քլօֆի կողմէ , կը շինուէր Քէմպրիճի մօտերը , Նիւընհէմի մէջ , Նիւընհէմ ֆոլեճ անուամբ :

Այսպէս հաստատուած են 1884էն մինչեւ 1888 չորս ուրիշ համալսարաններ կանանց համար : Այսօր Անգլիոյ մէջ կանանց յատուկ վեց համալսարաններ կան եւ ժողովրդեան միջակորեարի (bourgeoisie) բարքերուն մէջ մտած է արդէն զրկել իրենց աղջիկները , Ծիրդըն , Նիւընհէմ , եւ այլն՝ ուսանելու համար :

Այս բոլոր համալսարանները դրամական բարգաւաճ վիճակի մը մէջ են , թէեւ կառավարութիւնը որ եւ է նպաստ մը յատկացուցած չըլլայ անոնց : Անոնք ունին արդէն իրենց նուիրատուութիւնները , կտակները : Յետոյ սոյն համալսարաններու կողմէ դուստրներ կը տրամադրուին մրցումով գիտական եւ գրական լաւագոյն գործերը վարձատրելու համար :

Կանանց այս համալսարանները , գիշերօթիկ հաստատութիւններ են , կարմիր ազիւսէ շինուած շէնքերով (Halls) , պարտէզներով շրջապատուած : Հօլօուէյ քօլէճը , շինուած է Շամպոնի գղեակին նմանութեամբ : Ստուգիւ փառայեղ բնակարան մըն է այս շէնքը : Եթէ այս համալսարանները կը տարբերին Ամերիկայի կանանց համալսարաններէն՝ իրենց ուսման ծրագիրներով , սակայն այս գօլէճներու կեանքը նման է Ամերիկեան կանանց համալսարաններու մէջ եղածին : Հոն շատ ժամանակ կը տրուի մարմնոյ մարզանքներուն . կը իսպառն թէնիզ , կռիւ , հեծելանիւ կը նստին , կը թիավարեն , եւ այլն :

Նիւընշէմի ուսանողուհիները նոյնիսկ հրշէջներու ջովատ մը կազմակերպած են , որ երբեմն , փորձի համար վտանգի նշան մը տրուելուն կը սկսի գործել , եւ կը զուարճանայ «ազատելով» այն հին կարասիները որոնք քօլէճի շէնքին մէկ անկիւնը նետուած են :

Ուսանողուհիները սկսած են նաեւ քաղաքականութեան մասին շահագրգռուիլ համալսարաններուն մէջ՝ եղած վիճարանական քիւլպ-ներու (debating club) բանակցութիւններով : Այս քիւլպները վիճարանութեան կ'ենթարկեն օրուան խորհրդարանական եւ ընկերական խնդիրները , այս անթիւ ոգեւորութիւն կը յայտնուի home ruleի համար , եւ ազատական կամ պահպանողական ըլլալ կը թուին անդամուհիները , իրենց ընկերական աւանդութիւններուն կամ անձնական կարծիքներուն համաձայն :

Ուսանողուհիները կ'ընդունուին այս համալսարանները , յունարէնի , լատինարէնի , չափագիտութեան եւ արդի լեզուի մը մէջ քննութիւն անցնելէ վերջ : Անգամ մը որ անոնք անցուցած են այս քննութիւնը , կը սկսին հետեւիլ համալսարանի շէնքերուն մէջ բնակող ուսուցչապետուհիներու քննչպէս նաեւ Քէմպրիճի եւ Օքսֆորտի ուսուցչապետներու դասախօսութիւններուն :

Միայն Քէմպրիճի եւ Օքսֆորտի դպրութեանց եւ գիտութիւններու Փաքիլլէճներն են , որոնք արտօնած են կանանց մուտքը :

Իրենց աշխատութիւններու վերջին , այս ուսանողուհիները իրաւունք ունին համալսարանական քննութիւններուն ներկայանալու , ինչպէս նաեւ մասնակցելու դպրութեանց եւ գիտութեանց տօքթորի փորձերուն : Սակայն համալսարանական արտոգոսները (bachelor of arts, master of arts, philosophical doctor) Օքսֆորտի եւ Քէմպրիճի կողմէ չէ ընդունուած կիներուն տալ : Իրաւ է թէ քննութիւն անցընող կիներուն վկայագիր մը կը տրուի , բայց այս վկայագրով անոնք իրաւունք չունին վերը նշանակուած համալսարանական արտոգոսներէն մէկը կրելու :

Թէ ինչո՞ւ համար կանանց զրացում է ցարդ համալսարանական արտոգոսը , կը բացատրուի հետեւեալ պարագաներուն մէջ :

Օքսֆորտի եւ Քէմպրիճի համալսարանները կը վայելեն ինքնավարութեան (self government) իրաւունք մը , որով կը կառավարեն իրենց ինչքերը եւ գրամադուխը : Անդիշատակ ժամանակէ մը ի վեր , այս համալսարանները կառավարուած են իրենց անդամներուն կողմէ որոնք ունեցած են master of artsի աստիճանը . յետոյ այս աստիճանը ունեցողները կը մասնակցին համալսարանական գումարումներուն , զորս կրնանք վարչական ժողովներ անուանել , եւ որոնք իշխանութեանց կամ կառավարութեան կողմէ եղած որ եւ է միջամտութենէ զերծ են :

Այն օրը ուր ուսանողուհիները B. A.ի (Bachelor of arts) արտոգոսը ստանան , բնական է հետամուտ պիտի ըլլան նաեւ M. A.ի (Master of arts) աստիճանին , եւ երբ տիրանան այս աստիճանին , պարզ է որ պիտի ուզեն օգտուիլ այն բոլոր առաւելութիւններէն , զորս այդ աստիճանը իրենց կ'ընձեռէ , որով եւ պիտի սեղեն մասնակցել վարչական ժողովներուն :

Աւելին կայ զեռ : Անգլիոյ հին համալսարանները , իրենց ներկայացուցիչները ունին խորհրդարանին մէջ , ընտրելիները ըլլալով M. A.ի աստիճանը կրողները : Ուրեմն Օքսֆորտի եւ Քէմպրիճի համալսարաններէն արագոսի տիրացող ուսանողուհիները այն ատեն քաղաքական բոլոր իրաւունքներն ալ պիտի պահանջէին , ինչ որ ունին իրենց աստիճանակից այրերը :

Այդ համալսարանները չուզելով կանանց ընտրողական իրաւունքի խնդրին մէջ կարեւոր քայլ մը առած ըլլալ , ահա՛ թէ ինչու ամէն բանէ վերջ կը մերժեն ուսանողուհիներուն տալ այն արտոգոսը , ինչ որ անոնք արգէն օրինաւորապէս ստացած են :

* * *

Անգլիացի ուսանողուհիներուն մեծ մասը , քօլէճը ձգելէ վերջ կ'ամուսնանայ : Ամերիկացի ուսանողուհիներուն պէս ասոնք ալ թէեւ յաճախ ուշ կ'ամուսնանան , բայց կը յաջողին լաւ ամուսնութիւն մը կնքել : 1871էն մինչեւ 1896 . Նիւընշէմ Քօլէճը յաճախող 900 ուսանողուհիներէն 164ը ամուսնացած են այս կերպով :

Բայց անոնց մեծամասնութիւնը կրթական աստիճանով մէջ կը մտնէ եւ ասով պատասխանած կ'ըլլայ այն յոյսերուն զորս կը տա՝ ծննդ կրնան բարձրագոյն կրթութեան համար կազմուած ընկերութիւններ, որոնք 1869ին կրթական հոգի վրայ ծնունդ կուտային Անգլիոյ մէջ եղած կանանց շարժումին :

Այս կրնան շնորհիւ, աղջկանց երկրորդական կրթութիւնը ամբողջովին վերակազմուած է : Ասոնք են որոնք հիմնած են կին-ուսուցչապետներու ընկերակցութիւն մը եւ ընկերութիւն մը աղջկանց երկրորդական վարժարաններուն համար : Սոյն երկու ընկերութիւններն ալ միշտ աւելի բարգաւաճելու վրայ են :

Երկար մաքառումներէ վերջ միայն անգլիացի կիները իրաւունք ստացած են իրենց ուսած բժշկութիւնը ի գործ դնելու : Այսօր կին-բժիշկներու թիւը 100ը կ'անցնի :

4,016,230 Անգլուհիներ եւ 800000 Սկոտլանդիներ այսօր տունէն դուրս թռչակաւոր աշխատութիւններու մէջ կը գործեն :

Ամուսնացած կիներն ալ ամուրի կնոջ պէս կ'աշխատի :

Սոյն 5 միլիոն կիներէն 200000ի չափը կը հետեւի ազատական ասպարէզներու :

Վաճառականութեան եւ ճարտարութեան մէջ, կիները միշտ այրերէն նուազ կը վճարուին :

Բայց անգլիոյ մէջ, որ արհեստական ընկերակցութիւններու դասական երկիրն է, կիներ իր գործակալական (syndical) շարժումին շնորհիւ, ուրիշ տեղէ շատ աւելի բուռն կերպով հակազդած է այս անարդարութեան դէմ :

Արհեստակցային ընկերակցութիւնները հետզհետէ աւելի ծաւալելու վրայ են : Սոյն ընկերակցութեան ոչ միայն պարզ գործաւորներն են որոնք կը մասնակցին այլ նաեւ ազնուական եւ միջակորեար դասակարգէն կիներ, ինչպէս Լէյթի Տիլքէ, Ֆլորէնս Թիւզլիտ :

1875էն ի վեր, Հանրային Գիծութեան համար կազմուած յանձնաժողովներուն, ամենուրեք Անգլիոյ մէջ, կիները կ'երեւան, որոնք աղքատին պահապաններն են (guar-

dians of the poor) այնքան եռանդուն, որքան դործնական :

Վերջապէս 1893էն ի վեր կառավարութիւնը գործարաններու այցելու քննիչները կ'անուանէ կիներէն : Ասոնց թիւը տարուէ տարի աւելնալու վրայ է :

Դժբաղդարար, տեղի անձկութեան պատճառաւ կարելի չպիտի ըլլայ ծանրանալ այստեղ Միս Նայթինկէլի, Օքսֆորտի Հիլի եւ Ճօզէֆին Պօզլըրի այն գործունէութեան վրայ, որով ասոնք մարդասիրական եւ բարոյական վերականգման այնքան գեղեցիկ գործեր կատարած են :

Այս ամէնքէն վերջ պարզենք նաեւ անգլիացի կնոջ դերը հանդէպ քաղաքային օրինագիրքին : Ինչպէս Միացեալ Նահանգներուն եւ Աւստրալիական գաղութներուն մէջ, Անգլիոյ մէջ ալ երբեմն այս կէտը որոշուած էր նախկին հանրային օրէնքի (common law) տեսակէտէն :

Ասիկա քաղաքային իրաւունքներ կուտար ամուրի կնոջ, բայց միեւնոյն ատեն կը հաստատէր ամուսնացած կնոջ մը այդ իրաւունքներէն զրկուած ըլլալը : Ամուսնացած կին մը իր ամուսնոյն խնամակալութեան տակ կը նկատուէր, եւ իրաւունք չունէր ոչ իր անձնական ինչքերը վարելու, անոնցմէ իր ուզածին պէս տրամադրելով, ոչ ալ զայնս կտակել առանց իր ամուսնոյն հաւանութեան : Ամուսնացած կնոջ մը աշխատութեան փոխարէն վճարուած ամսականը օրէնքի առջեւ ամուսնոյն կը պատկանէր :

Հասարակութեան մանաւանդ ոչ-դիւրակեաց դասակարգի կիներն էին որոնք ամէնէն աւելի դառն կերպով կը զգային օրէնքի այս բոլոր անարդար արամադրութիւնները : Միայն 1870ին էր, որ արդէն եղած օրէնքը փոփոխուելով, կիներուն իրաւունք կը տրուէր, աշխատութեան մը փոխարէն ստացած իրենց թոշակին վրայ բացարձակ իրաւունք ունենալ :


Յետոյ 1882ին, ամուսնացած կիներու սեփականութեան օրինագիծով (Married Women's property act), երկու ամուսիններու ինչքերուն իրարմէ զատուիլը գործադրութեան կը մտնէր :

Այս նոր օրէնքին տրամադրութիւնն էր .
«Ամուսնացած կին մը , իբրեւ իր անհատական սեփականութիւնը կը պահէ այն բոլոր ինչքերը , որոնց տէրը եղած է ամուսնութեան միջոցին , ինչպէս նաեւ այն ամէն բաները , որոնց տիրացած է ամուսնութենէն վերջ : »
«Ասոր փոխարէն , կինը պարտաւոր է մասնակցիլ տան ծախքերուն , իր ունեցածներուն համեմատութեամբ : »


Եթէ ամուսնացած կինը ուզէ իր ինչքերուն վարչութիւնը ամուսնոյն ձգել , ասոր համար իրենց միջեւ պէտք է պայմանագրութիւն մը կնքուի :

Այսպէս , կինը , արդի Անգլիոյ մէջ կը ներկայանայ իբրեւ իրաւագիտական անհատ մը , այլէն բոլորովին անկախ :

ԳԱՂԱՓԱՐԻ ՊԵՏՔԸ ԳԱՒԱՌԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ (Թofous)



Սկիւ առաջ յօդուածով մը , (Մասիս թիւ 12) ջանացած էի բացատրել թէ գաւառացի գրագէտը ինքնագարգացման իմացական եւ նիւթական գիւղարուծութիւններու եւ միջավայրի աննպաստ պայմաններու բերմամբ , չունի պէտք եղած պատրաստութիւնը լուրջ ու բազմակողմանի գրականութիւն մը ընելու համար : Պ. Արտաշէս Յարութիւնեան այս յօդուածէս թիւադրուելով՝ Մասիսի 13-14 թուին մէջ «Հայ գրագէտը» խորագրին տակ փաստերու շարքով մը անհերքելի կերպով ապացուցած էր թէ այս սեռակէտով Պոլսեցի հայ գրագէտն ալ գաւառացիէն շատ տարբեր պայմաններու եւ պատրաստութեան մէջ չէր գտնուեր եւ թէ այսօրուան տաճկահայ գրականութիւնը՝ իր ամբողջութեան մէջ , amateur ի ծանծաղ գրականութենէն դուրս բան մը չունէր :

Բոլորովին համամիտ ըլլալով հանգերձ այդ եզրակացութեան , չենք կրնար ընդունիլ սաչայն թէ բայարձակապէս համանման ըլլան թէ՛ Պոլսեցի թէ՛ գաւառացի գրագէտին ապ-

րկու եւ դործելու պայմանները : Մենք կը կարծենք թէ Պոլսեցի գրագէտը գաւառացիէն դոնէ աստիճան մը աւելի զարգացման ու պատրաստութեան ձեւնաւ մթնոլորտի մը մէջ կ'ապրի ու կը կազմուի , եւ եթէ անտեսական պայմանները գրեթէ նոյն են Պոլսեցի թէ՛ գաւառացի հայ գրագէտին համար , բոլորովին չորացուիր ալ թէ Պոլսեցին վերջապէս ինքնագարգացման համար չ'առ աւելի դիւրութիւններ կը վայելէ քան գաւառացին , աւելի գիտակցօրէն նախապատրաստուելու համար լուրջ ու աշխատուած գրականութեան մը , թէպէտեւ անոնցմէ չատերը , անմեկնելի դանդաղկոտութեամբ , աշխատութենէ խուսափելով չուզեն պատեհութենէն օգտուիլ եւ սիրեն յարատեւել գրականութեան թեթեւ ու թոռցիկ սեւերու քմահաճօքին մէջ :

Այս կէտին վրայէն հարեւանցի անցնելով՝ մեր բարեկամին հետ կը խոստովանինք թէ համալսարանական զարգացում պէտք է մեր գրագէտներուն՝ մեր ներկայ գրական ու մտաւորական կեանքի մեղկ մթնոլորտին մէջ առաջ բերելու համար այն հիմնական առողջարար յեղաշրջութիւնը՝ որմէ պիտի վերածնի մեր ճշմարիտ գրականութիւնը . — գիտական կուռ հիմերու վրայ հաստատուած եւ զազափարային հիւթեղ կենսականութեամբ առլցուն գրականութիւն մը :

Սպասելով սակայն որ ապագայ տնտեսական աւելի բարեկալի պայմաններու տակ ծլի համալսարանական գրադէտի այդ ցանկալի սերունդը, պէ՛տք է որ ձգէինք մեր գրիչները ու բնաւ ճիշդ մը չընէինք դուրս նետուելու համար այն ծանծաղուտէն ուր մեր գրականութիւնը երախայի տապալակումներով դեռ կը սիրէ ճմպլտալ . . . Ի հարկէ անոնք՝ որ գրականութիւնը կը հասկնան իր լայն ըմբռնումով այնպէս՝ ինչպէս որ պէտք է, անտարբեր աչքով չէ որ կը գիտեն մեր գրականութեան ներկայ վիճակը որ կարող չէ գրեթէ ծառայելու ճշմարիտ դարգացման, ժամանցի առարկայ մը միայն հայթայթելով գրասէր ակործակներու ։ Ուստի անոնց վրայ՝ որոնք այս գիտակցութիւնը ունին եւ մեր ամէնէն բեղուն ու պատրաստուած մտքերն են — եւ ասանկներ ալ ունինք ապաքէն — պարտք մը կը ծանրանայ այժմէն բոլոր կարելի միջոցներով սատարելու մեր գրողներուն ու գրասէրներուն, մանաւանդ գաւառացիներուն ինքնազարգացման գործին, աշխատութեան ուղղութիւնները գծելով, կարեւոր գործեր մատնանիչ ընելով կամ ծանօթացնելով եւլն, եւլն Գաւառացի գրողները քիչ երախտապարտ պիտի չըլլային անոնց՝ որոնք այդ բաղձալի մեթոտը պարզէին, որմէ առաջնորդուելով անոնք կարող ըլլային ինքնաշխատութեան համար իրենց ունեցած դոյզն ժամանակը օգտակարապէս գործածել, փոխանակ զայն վատնելու յախուռն եւ առանց ընտրութեան կատարուած ընթերցումներով եւ այլ գրական անմեթոտ աշխատութիւններով որոնք մեծապէս հեռի են ծառայելէ լուրջ ինքնազարգացման մը նպատակին ։ Ստոյգ է թէ գաւառացի գրողները եթէ կանուխէն ինքնաշխատութեան արդիւնաւոր ու բանաւոր ուղղութեամբ մը առաջնորդուած ըլլային, ապահովապէս շատ աւելի լուրջ զարգացում մը իւրացուցած պիտի ըլլային, մինչդեռ հիմակուան ընթացքով անմեթոտ եւ անգիտակից աշխատութեան եւրեսէն՝ ժամանակի ապարդիւն մսխում մըն է որ կ'ընեն ։

Այս խնդրոյն մէջ պէտք չէ մոռնալ նաեւ օրագրութեան կատարելիք դերը քանի որ՝ ո՛ր կողմ ալ դառնանք, օրագրութիւնը միայն կը

մնայ մեզի տրամագրելի որուն միջոցաւ պէտք է իրագործենք մեր մտաւորական կեանքի հետ վերաբերութիւն ունեցող ամէն բարեւ շրջութիւն ։ Մեր ներկայ գրականութիւնը, այնքանը որ ունինք, ինչպէս շատ անգամ յիշեցուած է, ո՞վ չի գիտեր թէ օրագրութեան մէջ խտացած է, որմէ անդին բան մը չենք գտներ գրեթէ՝ որուն գրականութիւն անունը կարենայինք տալ ։ արդ՝ եթէ ան ալ զլանայ այն ծառայութիւնը որ կ'սպասուի իրմէ մեր զարգացման գործին մէջ, ա՛լ տարբեր ի՛նչ միջոց կը մնար մեզի . . . Դժբախտաբար մեր օրագրութիւնը մինչեւ հիմա շատ քիչ բան ըրած է այս տեսակէտով, աւելի ուժ տալով ժամանցի ծառայող կամ հետաքրքրութեան ճարակ տուող նիւթերու՝ քան լուրջ ուսումնասիրութեանց ։ Զարմանալի չէ ուրեմն եթէ մեր հասարակութեան ընթերցանութեան ճաշակն այն աստիճան աւելած է որ շատերը թերթ մը ձեռք առնելու ատեն կ'միայն լուր կը կարդան կամ թերթօն կը լսին, անկէ անդին կարգաւոր բան չգտնելով թերթին մէջ . . . Կը հասկընամ թէ օրագրութիւնը պէտք է որ աստիճան մը պարունակէ հետաքրքրաշարժ նիւթեր, բայց ան այս ընթացքով հասարակութեան միջակ մտքի տէր դասակարգին միայն ճաշակները չոյելով ու չեշտելով, բոլորովին անտես կ'ընէ քիչ շատ զարգացած դասակարգը որ շատ քիչ ճարակ կը գտնէ անոր մէջ ։

Մեր օրագրութիւնը՝ քանի որ մասնագիտական լուրջ պարբերագրեր չունինք ու չենք ալ կրնար պահպանել, պէտք է որ պարզ յրազրութեան աւելի բան մը ըլլայ եւ պարունակէ իր մէջ հարկաւոր տարրերը՝ մեծապէս նպաստելու համար գաւառացի գրողներու ինքնազարգացման, որոնցմէ շատերը չէնք չորհրդեք եւրոպական լեզու մը անգամ չգիտնալով՝ բացարձակապէս օրագրութիւնը միայն ունին՝ անոր միջոցաւ հաղորդակցելու համար եւրոպական մտաւորական շարժման հետ ։ Գիտական, փիլիսոփայական, իմաստասիրական, ընկերաբանական, տնտեսագիտական հոյակապ գործեր կան որոնց մէկ քանիին անունը միայն գիտենք ու շատերունը լսած

անգամ չենք . ինչո՞ւ այս գործերը հետզհետէ չթարգմանուին ու գոնէ օրագիրներու միջոցաւ մաս մաս չհրատարակուին , քանի որ այդ տեսակ գործերը առանձինն թարգմանելու , հրատարակելու յոյսը չկայ առայժմ : Առոնք կեանքի ու բնութեան մեծ երեւոյթներուն նորագոյն գննութեանց համաձայն պատմութիւնն ու գիտական բացատրութիւնը պիտի ուսուցանեն մեզի , մեր մտքի զատողութեան առջեւ նոր հորիզոններ բանալով եւ գաղափարներու ամէնէն բարերար յեղաշրջութիւնը յառաջ բերելով հոն ու մենք պիտի ապշինք մնանք . . . : Ստոնք են որ ամէնէն լայն ու ամէնէն առողջ գաղափարները պիտի ներշնչեն մեզի , ճշմարիտ զարգացման ճամբան բանալով մեր առջեւ :

Եթէ մեր օրագրութիւնը ի հարկին քիչ մըն ալ զոհողութիւն յանձն առնելով մշակէ այս կարգի նիւթեր եւ անոնց հետ մէկտեղ՝ ուժ տայ նաեւ , որ եւ է ձեւի տակ , տոհմային կեանքի գիտնականօրէն ուսումնասիրութեան՝ իր ամէն երեւոյթներուն մէջ , կարծեմ այն ատեն կրնանք յոստալ որ մեր մէջ ալ կամաց կամաց սաղմնաւորի այն գաղափարային լուրջ ու բազմակողմանի գրականութիւնը՝ որուն կը բաղձանք :

* * *

Խօսելէ յետոյ այն անհրաժեշտ հնարաւորութիւններուն վրայ՝ որոնք պիտի կրնան նպաստել գաւառացի գրագէտին ինքնազարգացման , մենք կուգէինք խնդրոյն լուրջ ստիպողականութիւն մը տալ , անգամ մըն ալ կրկնելով թէ գաւառը՝ ներկայ պայմաններուն մէջ , իր մտաւորական սնունդը միմիայն կեդրոնէն ստիպուած է քաղելու , քանի որ գաւառացի գրագէտը հարկաւոր զարգացում ստացած եւ աւելի լայն գրականութիւն մը ընելու պատրաստուած ըլլալու համար ո՛չ անհրաժեշտ բարձրագոյն կրթութիւնն առած է , ո՛չ ալ ընդհանուր մտաւորական շարժման հաղորդակցելու դիւրութիւններն ունի : Ու ո՛չ միայն հիմա՝ այլ եւ սկիզբէն ի վեր գաւառը պոլսական գրականութենէն զուրս չատ քիչ ճարակ գտած է իր մտքի ծարաւին յագուրդ տալու համար : Այս

այսպէս ըլլալով , բնական էր թէ գաւառական գրականութիւնը , հակառակ իր ինքնուրույնութեան ջանքերուն , առաւել կամ նուազ առաջնորդուած , թելադրուած պիտի ըլլար կեդրոնի գրականութենէն ու տողորուած՝ անոր տարրերովը : Հետեւաբար անգամ մըն ալ կը հասկցուի թէ կեդրոնի հիմակուան ծածաղ գրականութեան մէջ հնարաւոր բարերար յեղաշրջութեան մը իրագործումը՝ ինչքան անհրաժեշտ առնչութիւն ունի գաւառական գրականութեան եւ գաւառացի գրագէտի զարգացման հարցին հետ :

Մենք կուզենք մասնաւորել մեր խօսքը այն գաղափարական ազդեցութեան վրայ զոր կրած է գաւառացի գրագէտը՝ կեդրոնի գրականութենէն : Զանազան առիթներով բացատրուեցաւ արդէն թէ մեր ներկայի անարիւն գրականութիւնը գրեթէ զուրկ է գաղափարային կեանքէ . զարմանալի չէ ուրեմն թէ հակառակ վերջերս գաւառական-տոհմային գրականութեան մը հիմնաքարը դրուելուն , դեռ գաւառացի գրագէտին արժէքը առաւելապէս կը կայանայ իր ոճին ու արտայայտութեան ձեւերու բնատուրութեան՝ քան գաղափարական գործունէութեանը մէջ :

Կար ժամանակ մը սակայն՝ ինչպէս չատեր հաստատեցին , որ գաղափարային տարրերով առլի աւելի լուրջ գրականութիւն մը ունէինք ճոխ արտագրութիւններով , որոնք լիառատ ցանցերն մեր մէջ առողջ ու օգտակար գաղափարներու սերմերը եւ որոնց կը պարտինք մեր մտաւորական զարթոնումը՝ ներկայ դարու մէջ : Այս զարթոնումին ու անոր ընթացքին պատմութիւնը մինչեւ մեր օրերը , որ մեր արդի գրականութեան ալ պատմութիւնը պիտի ըլլայ , կարօտ է անչուշտ առանձին ուսումնասիրութեան . բայց մենք առայժմ հաւելանցի անցնելով այս կէտին վրայէն , կանդորադառնանք սա տխուր իրողութեան թէ 15-20 տարիներէ ի վեր այլ եւս չունինք գրեթէ գաղափարի գրականութիւն , եւ ինչ որ ունինք այդ սնունդով , նիհար լրագրութեան մը մէջ միայն սահմանափակուած կը մնայ , գրեթէ բոլորովին զուրկ ըլլալով գրական , գիտական , վիպական , քննական եւ այլ նմանօրինակ լուրջ ու երկայնաշունչ հրատարա-

կութիւններէ, որոնք ազգի մը ճշմարիտ գրականութիւնը կը կազմաւորեն :

Բացի այն պատճառներէն որոնց վրայ խօսուեցաւ, կան անշուշտ ուրիշ պարագաներ ալ որոնք արեւմտեան հայերու գրականութիւնը մղած են արեւելեան հայերուն գրականութեան հակառակ ընթացքի մը, այնպէս որ մինչ երկրորդը արուեստը անտես ընելով գաղափարը միայն փնտռած է, առաջինը արուեստին ոյժ տալով գաղափարին փոյթ չէ տարած: Երկրորդին մէջ գաղափարն է որ շեշտուած է ամէնէն աւելի, նոյն իսկ արուեստի հաշուոյն: Իսկ առաջինին մէջ արուեստն է ամէնէն աւելի շեշտուածը, յաճախ գաղափարի հաշուոյն: Ստոյգ է միեւնոյն աստեղ թէ Թրքահայ գրականութիւնը գաղափարի տեսակէտով առողջ ու գրական սկզբունքներու տեղ՝ բոլորովին վերացական սնամէջութիւններու ինքզինքը տուած եւ յոռետես ու հիւանդ ձգտումներու հակած է, ինչ որ վերջերս իրաւամբ ձաղկեցին մեր քանի մը լուրջ մտքերը: Ահա թէ ինչո՞ւ համար ցաւալի կերպով տգէտ մնացած ենք գիտական, ընկերաբանական, իմաստասիրական արդի հայեացքներուն եւ նոյնքան զուրկ առողջ ու գրական գաղափարներէ, հանգամանք մը որ մեր գրականութեան անբաժան եւ բնորոշ նկարագիրը դառնալ սկսած է ալ: Իրերու այս վիճակին մեր գրականութեան մէջ իբրեւ գաղափար կը մնար ինչ որ ժառանգուած էր մեր մտաւորական զարթոնմի նախակարապետներէն:

Սակայն, պէտք է խոստովանիլ թէ իբրեւ գաղափարային սնունդ ալ եւս անբաւական էր մեզի մեր ժառանգած հին գրականութիւնը, քանզի անոր պարունակած գաղափարները որքա՛ն ալ իրենց ժամանակին համար օգտակար նորութիւններ եղած ըլլան, ներկային համար հինցած ու արժէքէ ինկած են, գլխովին անհամապատասխան ըլլալով մեր ներկայ պէտքերուն ու ժամանակի պահանջներուն: Ասկէ զատ՝ անոնք մեզի միշտ օգտակար ալ եղած չեն եւ զանոնք իւրացնելով շատ անգամ ամէնէն ցաւալի սխալները գործած ենք, ինչ որ հիմա՛ կը հասկնանք: Ո՞չ ապաքէն յանուն լուսամտութեան, հինին, կանխակալին, աւանդականին դէմ մղած մեր սոս-

կալի պայքարին մէջ իբրեւ խոտելի ու վնասակար նախապաշարու՝ արհամարհանքի ու մոռացութեան մատնած ենք մեր բնիկ բարքերու, ըմբռնումներու անօգուտ ու տգեղ կողմերուն հետ՝ շատ մը գեղեցիկ մասերն ալ, անոնց տեղ ընդունելով խորթ ու վնասարեւ նորութիւններ: Պէտք է միանգամ ընդ միշտ ի բաց թողունք սա սխալ ըմբռնումը թէ ամէն ինչ որ հին է՝ իբր թէ անպատճառ վնասաբեր է եւ ամէն ինչ որ նոր՝ անպատճառ օգտակար: Քաղաքակրթութեան ու զարգացման ճամբուն մէջ սխալ հետեւողութեան մը բերմամբ՝ այս ըմբռնումը ինքնին խորունկ նախապաշարում մը դարձած է մեր մէջ, որուն դէմ ժամանակ է որ հակադդեցութիւն մը առաջ բերենք ալ: Ուրեմն պէտք է ընդունիլ թէ հին, ձգուած, մոռցուած նախապաշարումներ կան, աւելի՛ օգտակար, աւելի՛ բանաւորապէս համապատասխան մեր բարքերուն, որոնց պէտք է վերադառնալ հիմա, եւ շատ մը եկամուտ, նորամուտ գաղափարներ, ըմբռնումներ, օտար գրականութիւններու եւ քաղաքակրթութեան ազդեցութեան տակ մեր մէջ մտած, արմատացած, որոնք այսօր ալ հինցած նորութիւններ ու վնասաբեր նախապաշարումներ են դարձած, եւ իբր այն՝ պէտք է որ մէկդի թողուին այլ եւս:

Հայ գրագէտը՝ ընդհանրապէս եւ գաւառացի գրագէտը՝ մասնաւորապէս այն հին գաղափարի գրականութեան տակ կազմուած եւ գերազանցապէս անկէ ներշնչուած ըլլալով՝ բնական է թէ զուրկ մնացած ըլլայ անկախ մտքէ ու դատողութենէ եւ ամէն բանի վրայ սորված է գաղափար յայտնել կամ դատաստան ընել, կանխակալ ըմբռնումներու համաձայն: Ստոյգ է թէ անողոք կանխորոշութիւններ, ամէն խնդիրներու մէջ, մեր միտքերը կապած կաշկանդած են, որովհետեւ մտաւորապէս չա՛տ ետ մնացած ենք ժամանակի ընթացքէն եւ տակաւին կը սիրենք թարթափիլ հին միամոռութիւններու մէջ: Ասոր համար է որ մեր գրականութիւնը գաղափարի կողմանէ ա՛յնքան ամուլ կը մնայ եւ ամէն խնդիրներու մէջ, ըլլայ լեզուական, կրթական, ընկերական կամ տնտեսական, տակաւին հին ըմբռնումներ են՝ նորութեան աւրուած չարի մը տակ

որ տիրապետող կը մնան անտանելի միօրինակութեամբ մը յեղեղութեամբ, եւ որոնցմէ տարբեր խորհիլ կամ անկախ տեսութեամբ մը խնդիրը քննել՝ ո՛չ ոք մտքէն անգամ չանցընէր :

Իրաւունք ունին հիները երբ կը գանգատին թէ իրենք միշտ նորերէն կը կողոպտուն : Թէեւ անոնցմէ միշտ ալ կանգունուն : Եւ կը փափաքէի որ կարելի եղածին չափ քիչ առիթ տայինք այս զանգատին : Որքան ալ ստոյգ ըլլայ թէ չի կրնար ծլիլ նոր գրականութիւն մը՝ բոլորովին անկախ հինէն, բայց քանի որ ո՛րեւէ գրականութիւն արտայայտութիւնը պէտք է ըլլայ ցեղի մը ինքնութեան, ուստի մեր գրականութիւնը կըրնայ առանց անպատեհութեան իրաց թօթափել այն ամէն հին, օտար ու խորթ տարրերը՝ որոնք համաձայն չեն այս տեսութեան — եւ ասանկ տարրեր ալ կը վիստան մեր գրականութեան մէջ — եւ գիտական ոգւով, համոզուած ու իսկապէս գաղափարներով մեզի յատուկ կեանքի մը սկսիլ : Ա՛լ ժամանակն է

հրաօթափելու եւ դուրս վանելու մեր մտքերէն բոլոր աշխածութիւնները, տեղաւորելու համար անոնց տեղ առողջ, տոկուն եւ հաւասարակշիռ գաղափարներ, զերծ ամէն ծայրայեղութենէ :

Այս ուղղութեան մէջ փորձեր ծայր տըռած են արդէն թէ պոլսական եւ թէ գաւառի գրականութեան մէջ. կը մնայ հիմա միայն որ այս առաջին սկսնակ շարժումները յարատեւութիւն ու հետեւողներ ունենան եւ թէ գաւառացի գրագէտին ինքնագարգացման նպատակով ու զայն առաջնորդելու համար քիչ մը աւելի լուրջ ճիգեր ըլլան : Այդ պարագային գաւառացի գրագէտը ապահովարար պիտի ազատէր կանխորոշութիւններու ճշնշումէն եւ իր բովանդակ անկաշկանդ անհատականութեամբը երեւան գալով՝ աւելի գիտակցարար եւ աւելի օգտակարապէս պիտի մասնակցէր այն լուրջ գրականութեան զոր կուզենք սկսիլ եւ որ գերազանցապէս մեր կեանքովը ապօրուած՝ յաջողապէս պիտի միացնէ հաճելին՝ օգտակարին, արուեստը՝ գաղափարին հետ :

Ո Ւ Ր Ո Ւ Ա Կ Ա Ն Ն Ե Ր ()

Հ Ե Ն Բ Ի Ք Ի Պ Ս Ե Ն

Տիկին Ա. (խոր հառաւ մը կը գալէ, պահ մը պարտահանէն դուրս կը նայէ, +էլ մը կը խուռարէ սենեակէն մէջ և յետոյ կ'ուզէ ճաշէ սենեակը երեւալ, բայց ճշշաւած աղաղակ մը արշալէլով դուռն սեպն իջնալ կը կենայ :) Օսկալտ : Տակաւին սեղանէն չե՛ս ելեր :

Օսկալտ. (ճաշէ սենեակէն մէջ) . Կը նայիմ որ սիկառս ծխեմ լըմնայ :

Տիկին Ա. Ձե՛ս ուղիւր պղտիկ պտոյտ մը ընել :

Օսկալտ. Ա՛յս տեսակ օգոլ մը : (Բաժակէ

մը շարժուելու յայնը կը լսուի : Տիկին Ալլինի դուռը բաց կը յփէ և իր յետաքրքի առաքիւններովը պարտահանէն առջև գրասառ խանութէն իջնալ կը նայի :)

Օսկալտ. (Ներսէն) Հիմա դուրս ելողը Բասթոր Մանաէրսը չէ՞ր :

Տիկին Ա. Այո՛, վար ապաստանարանը գնաց :

Օսկալտ. (Բաժակէ շարժուելու յայնը կը լսուի նորէն :) Այո՞ :

Տիկին Ա. Այո՛ (Վշտացեալ դէմով մը) Սիրելի

Օսվալտ , այդ ըմպելիէն աւելի զգուշութեամբ
պէտք է գործածես . շատ խիստ է :

Օսվալտ . Այսպէս խոնաւ օդ եղած ատենը
աղէկ է :

Տիկին Ա. Եթէ կ'ուզես նեղու , քո՛վս ե-
կուր :

Օսվալտ . Բայց հոտ ներսը չեմ կրնար
ծխել :

Տիկին Ա. Գիտես որ ներսի է քեզի .
եթէ սիկար մը ծխես :

Օսվալտ . Այո՛ , աղէկ . ան ատեն կուգամ
Միայն կաթիլ մըն ալ . . . Հիմա՛ կուգամ .
(Սէկարսիւն «Էնեալ» ինչո՛ւն , և Երեմիայի «Դոմո»
իւն քոյն . . . Կորճ լաւ-լիւն մը .)

Օսվալտ . Բաթորը ո՛ւր գնաց :

Տիկին Ա. Անգամ մը ըսի , վար ապաս-
տանարան :

Օսվալտ . Այո՛ , իրաւ ըսի՛ր :

Տիկին Ա. Պէտք չէ այդքան երկար ա-
տեն կերակուրի սեղանին առջեւ նստիս , Օս-
վալտ :

Օսվալտ . (Սէկարս քերանք կանաչի վրայ
պահած) Բայց Մայրիկս , ինքզինքս այնչափ
հանգիստ կը զգամ երբ այսպէս կ'ընեմ . (Ինչ
շոյէ մայրը) մտածէ անգամ մը . . . Ինչ կը
նշանակէ ասիկա ինծի համար որ տունս վե-
րադարձած եմ եւ մօրս սեղանը կը նստիմ ,
մօրս սենեակին մէջ . . . եւ մօրս կերակուր-
ներէն կ'ուտեմ :

Տիկին Ա. Սիրելի , անուշիկ զաւակս :

Օսվալտ . (Քիչ մը անհանդարտ , ծիծելով
«Էնեալ»-ին մէջ վեր վար կը պարտէ :) Յետոյ ի՞նչ
բանի ձեռք պիտի զարնեմ ես այստեղը : Ը-
նելիք բան մը չունիմ . . .

Տիկին Ա. Նայէ՛ , ընելիք բան մը գտիր . . .

Օսվալտ . Այս ամպամած օդի՞ն : Ամբողջ
օրը արեւի ճառագայթ մը չերեւար : (Վեր վար
պարտելով) Ո՛հ , այս . . . աշխատելու կարող
չըլլալ . . .

Տիկին Ա. Թերեւս աղէկ մը չմտածեցիր
տուն վերադառնալէ առաջ :

Օսվալտ . Մտածեցի մայր . պէ՛տք էր որ
վերադառնայի :

Տիկին Ա. Այո՛ , որովհետեւ տասն անգամ
աւելի նախամեծար պիտի համարէի քեզ տանս
մէջ ունենալու երջանկութենէն զրկուել , քան
թէ դուն . . .

Օսվալտ . (Սէկարսն առնելով) Բայց ,
բա՛ն ինծի մայր , իրա՞ւ այնքան մեծ երջան-
կութիւն մըն է քեզի համար որ ես քովդ եմ :

Օսվալտ . (Լրագէտ մը կորէ կոր ընելով)
Ես այնպէս կը կարծեմ որ քեզի համար միեւ-
նոյնն է թէ ես կ'ապրիմ կամ ողջ եմ :

Տիկին Ա. Եւ դուն սիրտ ունիս , այդ
խօսքը մօրդ ըսելու համար :

Օսվալտ . Բայց դուն առաջները առանց
ինծի կրցած ես այնչափ աղէկ ապրիլ :

Տիկին Ա. Այո՛ , առանց քեզի ապրե-
ցայ . . . ասիկա իրաւ է . (Լաւ-լիւն . միշտ
շաղկապէ ասիկա պահած) Օսվալտ «Էն-
եալ»-ին մէջ վեր վար կը պարտէ . «Էնեալ»-ն յիշ-
է :

Օսվալտ . (Տիկին Ալիսին առնելով) Մայր ,
կրնամ քանարէին վրայ քովդ նստիլ :

Տիկին Ա. (Անոր «Էնեալ»-ը) Այո՛ , ե-
կուր , սիրելի զաւակս :

Օսվալտ . (Կը նստի) Քեզի բան մը պիտի
ըսեմ , մայրիկ :

Տիկին Ա. (Հեղափոխութեան) Ի՞նչ :

Օսվալտ . (Անշարժացած) Այլեւս չեմ կըր-
նար տանիլ :

Տիկին Ա. Ի՞նչ . ի՞նչ կայ :

Օսվալտ . (Առաջնորդ պէս) Քաջութիւնը
չունեցայ քեզ գրելու , եւ վերադառնալէս ի
վեր . . .

Տիկին Ա. (Թեւ յիշատակէն մէջ առնելով)
Օսվալտ , ի՞նչ կայ :

Օսվալտ . Ինչպէս երէկ նմանապէս այսօր
փորձեցի այդ մտածութիւնները ինձմէ բաց վա-
նելու համար . . . ինքզինքս ազատելու հա-
մար , բայց կարելի չէ :

Տիկին Ա. (Որոշէ կ'ընէ) Ա՛լ պէտք է որ
բացէ ի բաց խօսիս , Օսվալտ :

Օսվալտ . (Քաջութիւնը ինչո՛ւն անհանգիստ
կը նստի) Կեցի՛ր , մայր , եւ ես պիտի փոր-
ձեմ այդ բանը քեզի ըսելու . . . Քեզ գան-
գատեցայ թէ ճամբորդութենէս վերջ հողմու-
թիւն մը կը գրայի . . .

Տիկին Ա. Այո՛ , յետո՛յ , ի՞նչ եղեր է որ :

Օսվալտ . Բայց այդ չէ ըսածս . . . սո-
վորական հազարամեծութիւն մը չէ . . .

Տիկին Ա. (Կ'առնէ նորա՛ն քեզին ցարկէլ)
Ի՞նչ , հիւանդ ես , Օսվալտ :

Օսվալտ . (Ձեռքը նորէն բանալէն իրայ ին
տալէ) Կեցիր , մայր . հանդարտութեամբ մտիկ
ըրէ : Իրաւ հիւանդ չեմ ես , այնպէս ինչպէս
սովորաբար հիւանդ կ'ըսենք : (Երէւ յետեւ-
բով թիւնն ին շարժէ) Մայր , մտքովս հատած
եմ . . . ոչնչացած . . . ա'լ երբէք չեմ կրնար
աշխատիլ (Երեւ յետեւեւն մէջ կ'աւել , ճորը
գլխէն ին ներսէ , և ին սիւն բարձր յայնով ա-
րտաւել) :

Տիկին Ա. (Տեղանաւ և դռնը բացելով) Օս-
վալտ , երեսո նայէ . չէ' , չէ' , այնպէս չէ :

Օսվալտ . (Ծաւարած ճորը երեսն է գլխէն ին
նայէ) Ալ կարող չըլլա'լ երբէք աշխատելու :
Ոչ մէկ անգամ . . . երբէ'ք . Ողջ ողջ
մտած ըլլալ : Մայր , կրնա'ս ասոր պէս սոս-
կալի բան մը երեւակայիլ :

Տիկին Ա. Ինչպէ'ս այս անարկու բանը
քու վրադ եկաւ :

Օսվալտ . (Կ'ելլէ ին նայէ) Այո' , ճիշդ այդ
կէտն է , որուն անկարելի է խելք հասցնել :
Երբէք բուռն կեանք մը չեմ անցուցած : Ոչ
մէկ կերպով Այդ տեսակ բան մը պէտք չէ որ
կասկածիս իմ վրայ , մայր : Երբէք այդ տե-
սակ բան մը չեմ ըրած :

Տիկին Ա. Այդ տեսակ բան մը չեմ ալ
կասկածիր Օսվալտ :

Օսվալտ Եւ հակառակ ասոր իմ վրաս
եկած է այս սոսկալի դժբաղդութիւնը :

Տիկին Ա. Բայց նորէն կ'աղէկնայ սիրելի,
օրհնած զաւակս : Ուրիշ բան չէ , բայց կթէ
քիչ մը շատ աշխատած ես : Հաւատա ըսա-
ծիս :

Օսվալտ . (Գլխով ին նայէ) Ես ալ սկիզբները
այդպէս կը կարծէի , բայց . . . այդպէս չէ :

Տիկին Ա. Սկիզբէն մինչեւ վերջը պատմէ
ինծի , եղածին պէս :

Օսվալտ . Այո' , ես ալ կ'ուզեմ :

Տիկին Ա. Ե'րբ առաջին անգամ նշմա-
րեցիր այդ բանը :

Օսվալտ . Վերջին անգամ տուն գալէս
եւ յետոյ Բարիկ դառնալէս անմիջապէս ետքը ,
Այն ատենն էր որ սոսկալի գլխու ցաւեր ու-
նեցայ . . . ընդհանրապէս գլխու ետին , ինչ-
պէս որ ինծի կը թուէր ըլլալ : Ինծի այնպէս
կուգար որ երկաթէ նեղ օղակ մը ծոծրակիս
եւ գլխուս շուրջ կը պտուտակուէր :

Տիկին Ա. Եւ յետոյ :

Օսվալտ . Սկիզբները կը կարծէի թէ ուրիշ
բան մը չէր բայց կթէ սովորական գլխու ցաւ
մը , որ զիս իմ երիտասարդութեանս մէջ այն-
քան կը տանջէր :

Տիկին Ա. Այո' , այո' . . .

Օսվալտ . Բայց այնպէս չէր , շուտով կը
հասկնայի այս բանը : Այլեւս չէի կրնար աշ-
խատիլ , կ'ուզէի նոր , մեծ պատկեր մը սկսիլ ,
բայց այնպէս կը զգայի ինքզինքս , իբրեւ թէ
բովանդակ ուժեքս զիս լքած ըլլային . անդա-
մալոյժ մը դարձած էի . . . այլեւս չէի կրնար
հաստատ մտապատկերներ հաւաքել . . . խելքս
կը դառնար . . . իբրեւ թէ ամէն ինչ կ'որ
կ'որ կը պտուտակէր : Ա'հ , սոսկալի կացութիւն
մըն է ատիկա : Վերջապէս բժիշկ մը բերել
կուտայի . . . եւ իրմէ կը տեղեկանայի իրո-
ղութիւնը :

Տիկին Ա. Ի՞նչ ըսել կ'ուզես ատով :

Օսվալտ . Այնտեղի նշանաւոր բժիշկներէն
մէկն էր Իրեն կը բացատրէի ինչ որ կը զգայի ,
եւ այն ատեն կը սկսէր ինծի կարգ մը հար-
ցումներ ուղղել , որոնք ինծի համար , ըստ
երեւոյթին , բուն գործին հետ առնչութիւն
մը չունենալ կը թուէին , չէի հասկնար թէ
ատոնցմով ի՞նչ բանի համար կ'ուզէր մարդը :

Տիկին Ա. Յետոյ :

Օսվալտ . Եւ վերջապէս կը յարէր . արդէն
Ձեր ծնունդէն ի վեր ունիք այդ որդ ինկած
մասը . . . այո' , նոյն իսկ «vermoulu» բա-
ցատրութիւնը կը գործածէր :

Տիկին Ա. (Կ'աւել) Ի՞նչ ըսել կ'ուզէր
ատով :

Օսվալտ . Ես ալ նախ չի հասկցայ զինքը ,
եւ իրմէ աւելի պարզ բացատրութիւն մը
խնդրեցի : Եւ այն ատեն այդ անպիտան արա-
բածը կըսէր . . . (Կ'աւել) Եւ յետոյ . . .
ա'հ . . .

Տիկին Ա. Ի՞նչ կըսէր :

Օսվալտ . Կ'ըսէր . Հայրերուն գործած
մեղքերը տղաքներուն քով երեւան կ'ազան :

Տիկին Ա. (Կ'աւել) Հայ-
րերուն մեղքերը . . .

Օսվալտ . Դիւ չէր մնացեր որ զինքը գե-
տին զարնէի :

Տիկին Ա. (Սեւեւէն մէջ ին տալէ) Հայ-
րերուն մեղքերը . . .

Տիկինն Ա. Այո՛ւ . լամպարը վառէ բեր .
Ռեկինե. Իսկոյն . արդէն վառուած է .
(կ'երբայ) :

Տիկինն Ա. (Օսկարէն երբեք չէ) Օսկար ,
ինէ բան մի՛ պահեր :

Օսկար. Ատանկ բան չեմ ընկեր , մայր .
(«Եղանէն քով կ'երբայ») : Կարծեմ բաւական բան
ըսի քեզի :

Ռեկինե. (Լաճաքը ինքեքէ Ե- «Եղանէն
ճիշտ ինքեք») :

Տիկինն Ա. Ինծի նայէ , Ռեկինէ , կրնա-
յիր մեզի կէս չիշ շամբանեա բերել :

Ռեկինե. Շատ աղէկ , Տիկին . (Նորէն
դուրս կ'երբայ) :

Օսկար. (Տիկինն Ալիսին ինքեք երբեք չէ-
«Եղանէն քով կ'երբայ») . չա՛տ աղէկ եղաւ : Ար-
դէն ես զիրեքի որ մայրը իր զաւակը ծարաւ
պիտի չծգէր :

Տիկինն Ա. Վա՛խ , իմ սիրելի Օսկար .
ի՞նչպէս կրնայի տակաւին քեզի բան մը մեր-
ժել :

Օսկար. (Ոգեւորուած) Իրա՞ւ է ատիկա ,
մայրիկ , Իրա՞ւ է ըսածդ :

Տիկինն Ա. Ի՞նչպէս , ի՞նչ :

Օսկար. Որ ինծի բան մը չեա կրնար մեր-
ժել :

Տիկինն Ա. Բայց սիրելի Օսկար

Օսկար. Զայն մի՛ հաներ . . .

Ռեկինե. (Ափսէն ճիշտ ինքեք չէ շամբանե-
ա երբեք քաշակ ինքեք , զբաւ «Եղանէն ճիշտ ինքեք»
չիշը բանամ . . .

Օսկար. Ոչ , չնորհակալութիւն . ես կը
բանամ . (Ռեկինէ Նորէն դուրս կ'երբայ) :

Տիկինն Ա. (Սեղանին առջեւ կ'ըսէ) . Ի՞նչ
էր . . . որ պէտք չէի քեզի մերժել :

Օսկար. (Շէշը քաշակը դնելով) . Նախ
բաժակ մը . . . կամ երկու . (Ենցը ինքեք .
քաշակին վրէ ինքեք յետոյ կ'ըսէ երբեք չէ
ինքեք) :

Տիկինն Ա. (Զեւորը քաշակը) չնորհակալ
եմ . . . ես չեմ ուզեր :

Օսկար. Ուրեմն ինծի համար (Բաժակը
ինքեք , Նորէն ինքեք Ե- Նորէն ինքեք .
յետոյ «Եղանէն առջեւ կ'ըսէ») :

Տիկինն Ա. (Սպասողական դիմումով) Է՛, վերջը :

Օսկար. (Առանց անոր նայելու) ինծի մտիկ

ըրէ . ինծի այնպէս եկաւ որ այսօր կէսօրուան
ճաշին դուն եւ Բասթոր Մանտէրը բնաւ չի
խօսեցաք :

Տիկինն Ա. Նշմարեցի՞ր ատանկ բան մը .
Օսկար. Այո՛ւ . հը՛ . . . (Կարճ լռութիւն
ճիշտ) . . . ըսէ՛ ինծի , . . . ի՞նչ զա-
վարար ունիս Ռեկինէի վրայ :

Տիկինն Ա. Ի՞նչ զաւարար ունիմ .
Օսկար. Այո՛ւ : Աքանչելի աղջիկ չէ՞ .

Տիկինն Ա. Սիրելի Օսկար , դուն զինքը
ինծի չափ աղէկ չեա ճանչնար :

Օսկար. Ուրեմն :

Տիկինն Ա. Դժբաղդաբար Ռեկինէն պէտք
եղածէն աւելի ատեն իր հօրը տունը կեցած
է , պէտք էր զինքը աւելի կանուխէն քովս
առնէի :

Օսկար. Այո՛ւ . բայց սքանչելի աղջիկ չէ՞
երբ երեսը նայիս , մայրիկ . (Ինքեք ինքեք
ինքեք) :

Տիկինն Ա. Ռեկինէն բաղամթիւ եւ խոշոր
թերութիւններ ունի :

Օսկար. Ենթադրեմք թէ այդպէս է ,
ի՞նչ կ'ելլայ ատիկէ . (Նորէն ինքեք) :

Տիկինն Ա. Ասոր հետ մէկտեղ , շատ կը
սիրեմ զինքը , եւ իրեն համար պատասխա-
նատուութիւն մը ստանձնած եմ : Աշխարհի
մէջ , ո՛չ մէկ բանի համար կ'ուզէի որ իրեն
բան մը ըլլար :

Օսկար. (Նստած քեզին ցափելով) Մայր ,
Ռեկինէն է իմ միակ փրկութիւնս :

Տիկինն Ա. (Կ'ըսէ) Ի՞նչ ըսել կ'ուզես
ատով :

Օսկար. Այլ չեմ կրնար երկար ատեն ա-
ռանձին տանիլ այս բոլոր հոգեկան տանջանք-
ները :

Տիկինն Ա. Միթէ մայր մը չունի՞ր դուն ,
որ զայն քեզի հետ միասին կը տանի :

Օսկար. Այո՛ւ , ես ալ այնպէս կը յու-
սայի եւ այդ պատճառաւ , տուն , քու քովդ
զարծայ : Բայց այս կերպով չըլլար : Կը հա-
մոզուիմ կոր արդէն , թէ այս ճամբան չի-
լար : Այս տեղ կեանքը չեմ կրնար հանդու-
րժել :

Տիկինն Ա. Օսկար :

Օսկար. Պէտք է որ ուրիշ կեանք մը
վարեմ , մայր , ու այս պատճառաւ պէտք է

որ քենէ բաժնուիմ : Ձեմ ուզեր որ դաւն
ամէն ինչ աչքովդ տեսնես :

Տիկին Ա. Վախ զաւակս . բայց Օս-
վալտ , այնքան ատեն որ հիմակուան պէս
հիւանդ ես . . .

Օսվալտ. Եթէ միայն հիւանդութիւնը ե-
ղած ըլլար , այն ատեն քովդ կը մնայի , մայր .
որովհետեւ դուն ամէնէն սրտագին բարեկա-
մուհիս ես :

Տիկին Ա. Այո՛ , այնպէս չէ՞ Օսվալտ : Ի-
րաւ անանկ չե՞մ :

Օսվալտ. (Անհանգիստ անդին առջին պահու-
նէլով) . բայց ի՞նչ ընելու է այս տանջանք-
ները . . . զղջումը . . . եւ յետոյ անարկու-
մահացու վախը . . . : Օ՛ . . . այդ սոսկալի
վախը :

Տիկին Ա. (Անոր ետեւէն ելնալով) Վախ
. . . ի՞նչ վախ : Ի՞նչ ըսել կ'ուզես :

Օսվալտ. Ախ , մնացածը մի հարցներ :
Ես ալ չեմ գիտեր : Ձեմ կրնար նկարագրել :

Տիկին Ա. (Աջ կողմէն իւր Գալիէն
Բեյլ) :

Օսվալտ. Ի՞նչ կ'ուզես ընել :

Տիկին Ա. Կ'ուզեմ որ զաւակս ուրախ
ըլլայ . աս է ուզածս . այստեղ պէտք չէ որ
գէշ մտածումներով ասղին անդին ել/մայ :
(Ռեկլեյնէն՝ որ դռանը մէջ կ'սկսէ) Նորէն չամ-
բանեա բեր , ամբողջ շիշ մը . (Ռեկլեյն կ'եր-
էայ) :

Օսվալտ. Մայր :

Տիկին Ա. Կը մտածե՞ս թերեւս , թէ մենք
այստեղ , քաղաքէն դուրս չենք գիտեր ինչ-
պէս պէտք է ապրիլ :

Օսվալտ. Հրաշալի չէ՞ երեսը նայելուդ :
Ինչպէ՞ս ալ մեծցած է , եւ այնքան առողջ :

Տիկին Ա. (Սեղանին առջեւ նստելով) .
Նստէ՛ , Օսվալտ եւ ձգէ որ հանգարտութեամբ
խօսինք իրարու հետ :

Օսվալտ. (Կը նստի) . Դուն չես գիտեր ,
մայր , որ Ռեկլեյնէն հանգէպ ըրած մէկ անի-
րաւութիւնս պէտք է զարմանեմ :

Տիկին Ա. Դուն :

Օսվալտ. Կամ թէ պզտիկ անգգոռութիւն
մը . . . ինչպէս որ կ'ուզես անուանէ : Բաց
աստի շատ անմեղ , Վերջին անգամ երբ
տունն էի . . .

Տիկին Ա. Յետո՞յ :

Օսվալտ. . . . այն ատեն այնքան յաճախ
Բարիդի մասին կը հարցնէր ինծի եւ ես հոն
տեղի մասին ասկէ անկէ բաներ կը պատմէի
իրեն : Այսպէս կը յիշեմ որ օր մը իրեն հար-
ցուցի թէ ինքն ալ փափաք չունէ՞ր անգամ
մը գալու . . .

Տիկին Ա. Եւ յետո՞յ :

Օսվալտ. Նշմարեցի որ կաս կարմիր կը
կտրէր ու յետոյ կ'ըսէր . «Այո՛ , այդ բանին
իրաւ շատ կը փափաքիմ» : . . . «Այո՛ , այո՛ ,
կը պատասխանէի ես , օր մը ատոր ժամա-
նակը եւս կուգայ» . . . կամ թէ ատոր նման
բան մը :

Տիկին Ա. Անկից վերջը :

Օսվալտ. Յետոյ բնական է բոլորովին
մոռցայ . բայց իրեն երբ երէկ չէ առջի օր կը
հարցնէի թէ «ուրախ էր որ ես հիմա այնքան
ատեն հոս պիտի մնամ» . . .

Տիկին Ա. Այն ատեն :

Օսվալտ. Այն ատեն տարօրինակ կերպով
մը երեսս նայեցաւ եւ յետոյ հարցուց . «Բայց
ո՛ւր մնաց հիմա իմ դէպի Բարիդ ճամբոր-
դութիւնս» :

Տիկին Ա. Ի՛ր ճամբորդութիւնը :

Օսվալտ. Ու այն ատեն հասկցայ , որ
ինքը խնդիրը լուրջ առած էր եւ թէ ամբողջ
ժամանակը իմ վրաս մտածած եւ սկսած էր
Ֆրանսերէն սորվիլ :

Տիկին Ա. Ուրեմն ատո՛ր համար . . .

Օսվալտ. Մայր . . . այն միջոցին երբ
այդ հիանալի , ազուր , մինչեւ ծուծը առողջ
աղջիկը աչքիս առջեւ կեցած կը տեսնէի . . .
առաջները քնաւ ուշադրութիւն չէի ըրած ի-
րեն . . . երբ այսպէս իմ առջիս կենար , իւ-
րեւ թէ զիս պիտի գրկէր . . .

Տիկին Ա. Օսվալտ :

Օսվալտ. . . . այն ատեն միայն կը հաս-
կընայի որ իր ձեռքն էր իմ փրկութիւնս . . .
որովհետեւ իրեն մէջ ապրելու զուարթութիւն
մը կայ :

Տիկին Ա. (աղաթ) Ապրելու զուարթու-
թիւն . . . Ատիկա կրնայ փրկել մէկը :

Ռեկլեյնէն. (Ետեւանէն շիշ մը հաշի տե-
նալէն) Ներեցէք որ այսքան ուշացայ , բայց
պէտք էր որ վար մառանը իջնէի . . . (շէշը
տեղանէ վրայ իւր դէպ) :

Օսվալտ. Բաժակ մըն ալ բեր :

Ռեկինե. (Զարմացած Օսվալտին կը նայէ) Տիկնոջ բաժակը հոս է , Պարոն Ալվինկ :

Օսվալտ. Այո՛ , բայց բաժակ մըն ալ քեզի համար բեր , Ռեկինէ :

Ռեկինե. (Կը ցնցուէ և խռատօրէն , վախճապով կը շարժուի) Եւ ի՞նչ աստիճանի մը կը նետէ Տիկին Ալվինկ (վրայ) :

Օսվալտ. Ինչո՞ւ կը սպասես :

Ռեկինե. (Յո՛ւրիս յայտնով և դադարաւոր կերպով) Տիկնոջ կամքովն է որ կ'ըլլայ այդ բանը :

Տիկին Ա. Բեր բաժակը , Ռեկինէ . (Ռեկինէի հասնելէ անմիջապէս կը շարժուի) :

Օսվալտ. (Ետեւէն կը նայէ) Նշմարած ես թէ ինչպէս կը քալէ : Այնքան ուժով եւ վստահ :

Տիկին Ա. Զըլլալիք բան է աս , Օսվալտ :

Օսվալտ. Դործը լմնցած է արդէն : Ահա ւառիկ աչքովդ կը տեսնես : Այլեւս օգուտ չընէր անոր դէմ խօսիլը :

Ռեկինե. (Կոտորակաւ պարտաւոր խօսքով) Եւ ի՞նչ աստիճանի կը պահէ :

Օսվալտ. Նստէ Ռեկինէ :

Ռեկինե. (Հարցնող անհամբերօրէն Տիկին Ալվինկին կը նայէ) :

Տիկին Ա. Նստէ , նստէ :

Ռեկինե. (Ճշգրտօրէն անհամբերօրէն խօսքով) Եւ ի՞նչ աստիճանի կը պահէ և պարտաւոր խօսքով) Եւ ի՞նչ աստիճանի :

Տիկին Ա. Օսվալտ , . . . Ի՞նչ էր ան , ինչ որ ապրելու զուարթութեան մասին կ'ըսէիր քիչ մը առաջ :

Օսվալտ. Այո՛ , ապրելու զուարթութիւնը , մայրիկս , . . . դուք այդ բանը շատ քիչ գիտէք , այստեղ : Այդ բանը երբէք չեմ գտար այստեղ :

Տիկին Ա. Նոյն իսկ ո՞չ , երբ իմ հետս ըլլաս :

Օսվալտ. Ոչ մէկ անգամ , երբ այստեղ եմ . . . Զէ՛ , չես հասկնար դուն այդ բանը .

Տիկին Ա. Ո՛չ , ո՛չ , ես գրեթէ համոզուած եմ որ այդ բանէն կը հասկընամ . . . հիմա :

Օսվալտ. Այո . . . եւ յետոյ աշխատելու

զուարթութիւնը : Այո՛ , իրականութեան մէջ գրեթէ միեւնոյն բանն է , Բայց դուք այս տեղը այդ բանի մասին ալ տեղեկութիւն չունիք :

Տիկին Ա. Այդ մասին կրնաս իրաւունք ունեցած ըլլալ . Օսվալտ , քիչ մը խօսի՛րք այդ մասին :

Օսվալտ. Այո՛ , ըսել կ'ուզեմ որ , ձեզի այստեղ կը սովորեցնեն հաւատալու որ աշխատութիւնը անէ՞ք մը եւ յանցանաց քառութիւն մըն է . . . եւ թէ կեանքը դառն բան մը , որ այնքան լաւ կ'ըլլայ որքան շուտով իր վախճանին հասնի :

Տիկին Ա. Դառնութեան հովիտ մը , այո՛ : Եւ ամէն բանէ վերջը այս ամէնքը հաւատալով , պատուական կերպով կը կատարենք :

Օսվալտ. Բայց դուք այնտեղ , մարդիկ այդ տեսակ բաներու մասին չեն մտածեր անգամ : Այնտեղ մէկ հոգի մըն ալ չի կայ որ այդ տեսակ բաներու հաւատայ : Դուք աւելին մարդ կը զգայ որ միայն ապրիլը ինքնին արդէն խայտառակ կերպով կը խառնուի մըն է : Մայր , չի նշմարեցի՞ր որ իմ բոլոր նկատածներս կը դառնան ապրելու զուարթութեան շուրջ : Միշտ եւ յարատեւ կերպով ապրելու զուարթութեան շուրջ , Դուք , արտասահմանի մէջ լոյս ու արեւ ու կիրակիի զուարթութիւն մը կայ . . . եւ ճառագայթով , երջանիկ մարդու դէմքեր . . . ասոր համար կը վախճամ , այստեղ քովդ , հայրենիքիս մէջ մնալու :

Տիկին Ա. Կը վախճամ : Ի՞նչ բանէ կը վախճամ իմ քովս :

Օսվալտ. Կը վախճամ . որովհետեւ այն ամէն բան որ մէջս կը զեռու կրնայ այստեղ անբարոյականութեան փոխուիլ :

Տիկին Ա. (Ուշադրօրէն եւ քիչ կը նայէ) Կը կարծե՞ս որ այդ տեսակ բան մը կրնայ պատահիլ :

Օսվալտ. Շատ լաւ գիտեմ ատիկա : Եթէ մարդ այստեղ ալ դուրսի ունեցած կեանքովը ապրէր . . . բայց միեւնոյն կեանքը չկայ այստեղ :

Տիկին Ա. (Որ ւշադրօրէն խօսքով կը խօսէ) Ի՞նչ է զո՞ւրկանք անոնք որոնք անոնք և կ'ըսեն) Հիմա կը հասկընամ կապը :

Օսվալտ. Ի՞նչ կը հասկընաս :

Տիկին Ա. Հիմա կը հասկնամ առաջին անգամ ըլլալով : Եւ ա՛լ պէտք է որ ըսելիքս ըսեմ :

Օսվալտ. (Որոշ կ'ելլէ). Մայր , չեմ հասկընար ինչ ըսել կ'ուզես :

Ռեկինե (Որ նմանապէս որոշ էլլած է) . կ'ուզէք որ թերեւս դուրս ելլեմ :

Տիկին Ա. Ո՛չ , կեցիր : Հիմա ա՛լ կրնամ խօսիլ : Հիմա՛ զաւակս , պէտք է որ ամէն բան զիտնաս : Անկից վերջ ուզածդ կրնաս ընել : Օսվալտ , Ռեկինէ՛ :

Օսվալտ. Լըռէ : Բաթորը . . .

Բաւթոր Մ. (Նախաճաշէն դուրս ելլելու համար) Այո՛ , հիմա վարը սիրտ յուզող ժամ մը անցնողինք :

Օսվալտ. Մե՛նք ալ :

Բաւթոր Մ. Իր նաւաստիներու ապաստանարանին համար պէտք է օգնել էնկազրանաին : Ռեկինէն պէտք է իրեն հետ երթայ եւ օգնէ իրեն . . .

Ռեկինե. Ո՛չ , շնորհակալ եմ Պարոն Բասթոր :

Բաւթոր Մ. (Ինչ որ Ռեկինէն րեւոյթ ըլլալով) Ի՞նչ . . . Հո՞ս . . . եւ ձեռքը բաժակով մը :

Ռեկինե. (Ծոր Բ. Բաժակէ վրէպելով) Ներողութիւն . . .

Օսվալտ. Ռեկինէն ինծի հետ պիտի երթայ , Պարոն Բասթոր :

Բաւթոր Մ. Ձեզի հետ պիտի երթա՞յ :

Օսվալտ. Այո՛ , իբր իմ կինս , . . . եթէ կ'ուզէ :

Բաւթոր Մ. Բայց , Տէ՛ր Աստուած զթա՞ծ . . .

Ռեկինե. Յանցանք իմա չէ , Պարոն Բասթոր :

Օսվալտ. Կամ թէ հոս կը մնայ . . . եթէ ես մնամ :

Ռեկինե. (Ահաճայ) Հո՞ս . . .

Բաւթոր Մ. Տիկին Ալվինկ . . . զիս քար կը կտրէք :

Տիկին Ա. Այդ երկուքէն ոչ մին տեղի պիտի ունենայ , որովհետեւ հիմա կրնամ բաց կերպով խօսիլ :

Բաւթոր Մ. Բայց այդ տեսակ բան ընելու չէք : Ո՛չ , ո՛չ , ո՛չ :

Տիկին Ա. Այո՛ , կրնամ եւ կ'ուզեմ խօսիլ , եւ նորէն ոչ մէկ իտէպ պիտի փճանայ :

Օսվալտ. Մայր , ի՞նչ է այդ ինչ պահուածը : Ռեկինե. (Ահաճայ դուրս) Տիկին , մտիկ ըրէք : Դուրսը մարդիկ կը պոռան : (Ռեկինէ ծաղկանոցը երեւելով դուրս ելլելու) :

Օսվալտ. (Ձախ կողմէ պարտաւորաբար առջև) Ի՞նչ է պատահածը : Ուրկէ՞ է այդ լոյսը :

Ռեկինե. (Կը պարտաւորաբար) Կրակ կայ ապաստանարանին մէջ :

Տիկին Ա. (Կը ցատկէ , պարտաւորաբար առջև կուգայ) Կրակ կայ :

Բաւթոր Մ. Կրակ կայ : Անկարելի բան է : Դեռ հիմա ես վարն էի :

Օսվալտ. Ո՛ւր է գլխարկս : Ձէ . իրաւ պէտք չունիմ . . . : Հօրս ապաստանարանը . . . : (Պարտաւորաբար դուրս ելլելու) :

Տիկին Ա. Իմ լաթս , Ռեկինէ , սոսկալի կերպով կ'այրի կոր :

Բաւթոր Մ. Սոսկալի՛ բան : . . . Տիկին Ալվինկ , պատժոյ դատաստանն է որ շփոթուած թիւններու այս տունին վրայ կը ծաղի :

Տիկին Ա. Այո՛ , այո՛ , անսարակոյս : Եւ կու՛ր , Ռեկինէ : (Ինչ որ Ռեկինէ նախաճաշէնէն դուրս ելլելու) :

Բաւթոր Մ. (Ձեռքերը իրար դէմ դնելով) Եւ բան մը ապահովագրուած չէ : (Նախորդ ներսէն ելլելու) :

(Ծառանակելի)



ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ ՈՒ ՎԱՆԿԵՐ

ԱՐՍԷՆ ՄՈՒՍՐ

ՅՈՒՇԵՐԳ

Ա.



ԵԱՆՔԻՍ ամեն հովերուն ցրուած, քոչնած ծաղիկներէն,
Տարօրէն,
Փունջ մ'եմ պահեր բոյրերու, — անհուն բոյրերն երկնային,
Յիշատակին,

Բոյրերն արբշիւ. գոր մերք հոգւոյս մէջ կը քօբուեմ ըզմայլած .

Հին ձայներէն ալ լրուած, անխելի ալ երգերէն,
Տարօրէն,

Լըռութիւն մը մընաց ինծի, — մեծ լըռութիւնը խորին,
Յիշատակին,

Հոծ լռութիւնն որուն հոգիս մերք կ'ունկընդրէ ըզմայլած .

Հին ձեւերէն ալ անգոյ, շոգիացած մարմիններէն,
Տարօրէն,

Միայն հոգի մը մընաց ինծի, — կարօտահար այրի հոգին,
Յիշատակին,

Պանդուխտ հոգին որուն հոգիս մերք կը փարի ըզմայլած .



Բ.

ԲԵԻԱԹԱՓ երկրնքէն կուգայ գիշեր անվախճան,
Աստուածային օրօրունոյ ծածանքներով եղկ ու խոհուն,
Մութ ու լըռին աղօթքն ամբաւ կը ծաւալի ըստուերներուն,
Օղին մեջէն, — միսքիք տաճար ալ անդորրի ու մոռացման .

Հոգւոյս խորէն այդ եջքին ըսքանջացած քոյր պատասխան,
Տրտմութիւնը կը ծագի ըզմայլանքով սառսրոուն .
Տրտմութիւնը կը բարձրանայ ալելուեալ՝ իբրեւ անհուն,
Որ երբայ յամր ողջունեն Շրնորնքի հջքը գիշերուան .

Աստուածափառ պակուցումը կը սաւառնի վերը մութին .
Ու բրբրուուն լոյսէ խաղեր դաշնակութեան գիշերային,
Երկնից սուգին ծոցէն մընայլ աստղերն ահա կը յառնեն .

Հոգւոյս սուգին մեջէն ներհուն, — արցունք-աստղեր սառսագին ,
Փըլատակները միսքիք լուսաւորող անցեալին,
Յամբաքրբիք յիշատակները կ'արբըննան մըտմըտային .

ՀԱՆՃԱՐ ԵՒ ԽԵԼԱԳԱՐՈՒԹԻՒՆ

Կ. Բ.



ԵՐՁԵՐՍ լրագրութիւնը,
եւ մասնաւորապէս Մա-
ւիս շատ զբաղուեցաւ
հիւանդ գրականութեամբ
եւ հիւանդ գրիչներով:

Ամէն արդիւնք իր պատճառն ունի. հիւանդ
գրականութիւնն եւ հիւանդ գրիչն ալ արդիւնք
է հիւանդ հանճարներու. հետեւեալք, ան-
հատապէս շատ ալ մեղադրելի չեն հիւանդ
գրականութեան մը ծնունդ տուողները, եւ
կամ թէ պատճառին գիտակից ըլլալով, շատ
ալ խտտապահանջ ըլլալու չենք: Որովհետեւ
գիտուններու կողմէ՝ բազմաթիւ փորձերով
հաստատուած իրողութիւն մըն է, թէ հան-
ճարեղ մարդկանց մեծագոյն մասը, պարզա-
պէս հիւանդներ-խելագարներ են: Այս մասին
ամբողջ գրականութիւն մը հիմնուած է, ու-
րուն զուտը կը գտնուի խալաքի հռչակաւոր
գիտուն Բրոֆէսէօր Չէզարէ Լօմպրօզօ: Ու-
րիշ երեւելի գիտուններ՝ Լօմպրօզօյի հետ՝ չեն
կարողացած սահման մը որոշել խելագարու-
թեան եւ հանճարի մէջ. շատերու կողմէ հան-
ճարը նկատուած է ջրախօս (nevrose) մը, խե-
ղագարութիւն մը . . . :

Յիմարանոցներու ընդհանուր քննիչ Տօքթ.
Ալպէր Ռէնկար կը գրէ՝ «Այսպէս նախադրուած
դասաւորութեան մէջ, վերջին հանգամանքով
եւ պարզ մտքով կը հասնինք այն սահմանին
ծայրը, ո՛ր խելագարութեան եւ բռնակա-
նութեան մէջ որոշ սահմանադիմ մը նշանա-
կել ճշմարտապէս անկարելի կը դառնայ. այս
մասին ժողովրդական առածը իրականութեան
ճշմարիտ արտայայտութիւնն է: Սակայն, եթէ
աշխարհ լեցնող խենդերը ապաստանարան-
ներու մէջ փակուած «ապուշներու» հետ շո-

շախման կէտ մը ունին, միւս կողմէ, արիւ-
նահաւաք զառանցումի զրգումա՛յը, այսինքն
սանդուխին ամենաբարձր աստիճանին վրայ,
խելագարութեան հանճարի հետ սահմանակից
ըլլալը կը հաստատուի. . . »

«Մտաւորականին պէս, հոգեկան խառն վի-
ճակն ալ, կըսէ Տօք. Մօրօ աը Թուր, մտա-
ւորական բարձրագոյն կարողութիւններու կամ
ընդունակութիւններու հետ, մտքի զործա-
րաններուն արտա-քնակասական վիճակին մէջ
ունի իր ծագումը: Հանճարը, այսինքն մտա-
ւորական զործունէութեան ամենաբարձր ար-
տայայտութիւնը ջրախօս մըն է. . . : Ի՞նչու
չըլլայ»:

Փարիզի բժշկական համալսարանին Բրո-
ֆէսէօր Շարլ Ռիշէ, Բրոֆէսէօր Լօմպրօզօյի
Հանճարեղ Մարդը (L'Homme de Génie)
գրքին Ֆրանսերէն թարգմանութեան յառա-
ջաբանին մէջ ակաւնայ կը խոստովանի այս
ճշմարտութիւնը. այդ հմտակից յառաջաբանին
մէկ քանի կտորները այստեղ կը ներկայա-
ցնենք, հաստատելու համար մեր ըսածը:

«Իր կարծիքը (Լօմպրօզօյի) շատ տարբեր
է, եւ պէտք է յայտնել, որ զրական իրո-
ղութիւններու վրայ հիմնուած է. մէկ կողմէ
հնարիչներու, գիւտ ընողներու, մտքերը սեր-
մանողներու եւ ստեղծողներու բարձր եւ հզօր
հանճարը մտաւոր անստգիւտ առողջութեան
մը չհամապատասխաներ. միւս կողմէ ալ յիմար-
ներու յատուկ եղող իմացականութեան եղա-
նակներուն մէջ, խենդերու եւ հանճարեղ
մարդկանց միանգամայն յատուկ հոգեբանական
զանազան հանգամանքներու կը հանգալինք»:

«Հանճարեղ մարդուն եւ տաղանդաւոր
մարդուն միջեւ եղած վիճակը սահմանել
բաւական դժուար է. տաղանդաւոր մարդուն
եւ միջակ մարդուն մէջ ոչ ոք կարող է բա-
ցարձակ սահման մը, բացորոշ սահմանադիմ
մը հաստատել: Աւա՛ղ, իւրաքանչիւր դասա-

կարգութեան համար միեւնոյնը չէ՞ : Ուրեմն Յոյներուն հին իմաստակութիւնը չվերանորոգենք , որոնք կը պնդէին թէ կնտակ մարդեր չկան , որովհետեւ մազերուն ճիշդ թիւը որոշել կարելի չէ : Ուրեմն , սահման չը փնտռենք , եւ ընդունինք այն մարդերը , որոնց հանճարը ակներեւ է , օրինակի համար , Տանթէ , Բասքալ , Շէյքըսպիր , Նիւլդըն , Վիքթոր Հիւկօ , Կէօթէ , Լէօնարտօ տէ Վինչի , Ռաֆայէլ , Նաբոլէօն» :

«Բասքալ տասնեւմէկ տարեկան հասակին մէջ երկրաչափութիւնը հնարեց : Տասնեւութ տարեկան եղած ատեն բնագիտութիւնը սրբագրեց : Այդ տեղ՝ գրեթէ սոսկալի՝ նորանշան արտողութիւն (anomalie) մը չկա՞յ , որ այս այդ տարիքին մէջ , ուր սովորաբար գնդակ տղան կը խաղան , աւելի մեծ եւ աւելի խորին կերպով յզայաւ , ինչ որ վարպետները քսան դարու մէջ չէին կարողացած ընել : Բասքալ մը ըլլալու համար , հիւանդ մը ըլլալու է , հիւանդ բառին տալով իր բուն իմաստը , այսինքն արտականոն (anormal) իմաստ : Զը գիտեմ ներելի՞ է այլասեռուած (dégénéré) բառը գործածել , որ Պարոն Լօմպրօզօ կը գործածէ . վասն զի ատիկա ինծի ակամայ որբապօղութիւն մը կը թուի : Փոխանակ այլասեռուած ըսելու , կանխասեռուած (pro-généré) պիտի ըսեմ» :

«Ուրեմն , հանճարաւոր մարդուն մտածողութեան եղանակին մէջ տարապայման արտասովոր եւ տարօրինակ բան մը կայ : Արդ , ճիշդ այս տարօրինակութեան հանգամանքն է , որ խենդերու մտածողութեան կերպին մէջ կը գտնուի : Այլանդակ գաղափարներու յարակցութիւններն են , որ մեզ այսպէս կը խանդարեն , ինչպէս հաշիւի ներգործութիւնները եւ խելագարներու զառանցանքները» :

«Արդարեւ , մեծ մարդը թէեւ տեղ տեղ յիմարի մը հետ մերձեցման քանի մը կէտեր կ'ընծայէ , սակայն եւ այնպէս մասնաւոր հանգամանքով մը անկէ կը տարբերի : Խենդին

այլանդակ եւ արագ յղացումը ունի , բայց բան մը աւելի ունի . եւ այդ է որ իր յղացումը կը բեղմնաւորէ , փոխանակ զայն անհեթեթ եւ ամուլ թողնելու , յստակութիւն եւ մեծութիւն մը տալով անոր» :

«Խենդերուն յաճախ ենթարկուած ուղղադատ (raisonnante) խելագարութեան հոգեբանական խորունկ , մանրակրկիտ եւ անողոք վերլուծութիւնը , անբաղդատելի ուժի աստիճանով մը Տօսթօէվսքիի Ոճիւր եւ Պաշիթ [Crime et Châtiment] հեղինակութեան մէջ կը գտնուի , այս կարող գրագէտին , որուն մտաւորական պակասութիւնը նուազ չէր էտկա Բօի ունեցածէն : Իր գրքի անձկութուն ընծածայած մէկ քանի գատողութիւններուն այլանդակութիւնը բոլորովին յիմարի մը վայել է : Ասոր հետ մէկտեղ , այս գրքին մէջ անկարելի է չը գտնել գոհնիկ ուշիմութենէ աւելի բարձր կորովամտութիւն մը : Եթէ այն հանճար չէ , զոնէ՞ հանճարին չատ մօտ է» :

Լօմպրօզօյի վերոյիշեալ խիստ չահեկան եւ օգտակար գրքէն կարեւոր գլուխներ թարգմանելով , յաջորդ յօդուածներով պիտի ջանանք հաստատել մեր հիմնակէտը :

Սակայն այս բաժնի պէտք է յիշենք , որ մենք բնաւ կուսակից կամ պաշտպան չենք հիւսնիդ գրականութեան մեր մէջ տարածուելուն . օրաթերթներու եւ հանդէսներու խմբագրապետները պարտաւոր են լուրջ հսկողութիւն մը ի գործ դնել հանճարեղ կամ միջակ գրողներու արտայայտութիւններուն վրայ , եւ միայն հրատարակութեան աւժանի գատածնին հրատարակել . որովհետեւ , ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք , տիեզերահռչակ հանճարներն իսկ ունեցած են իրենց այլանդակ եւ յիմար գրուածները , յիմարաբանութիւնները (sottises) , ինչպէս , Glenau, Wilkins, Longfellow, Ponsard, Louis Napoléon, Victor Hugo, Bernardin de Saint-Pierre, De Maistre, Dupanloup, Montesquieu, Bonaparte, Jules Noriac, Wagner, եւ այլն :

ԹՐԱՆՍՎԱԼԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԷԶԵՐ)



ԹՐԱՆՍՎԱԼԻ հանրապե-
տութիւնը, թէեւ իր
բնակչութեամբ տակա-
ւին մէկ միլիոնի չի
հասնիր, բայց իր սահ-

մաններուն մէջ կ'առնէ 119,139 քառակուսի
մղոն տեղ, որ դրեթէ կը հաւասարի Անգլիոյ
տարածութեան: Թրանսվալ արեւագարծի եր-
կու կողմերուն վրայ գտնուելով, ունի նպաս-
տաւոր կլիմայ եւ արգասաբեր հող: Իր կլի-
մային եւ հողին արդիւնքն է, որ դէպ ի հոն
կը դիմեն շատ մը հողագործներ եւ անասնա-
բուծներ: Բաց աստի Թրանսվալի հողը հարուստ
է նաեւ հանքերով, ի մասնաւորի ոսկեհանքով,
բան մը որ թէեւ ըստ երեւոյթին բարեբաղդ-
պարագայ մը երկրի բնակիչներուն համար,
բայց այդ եղած է նաեւ իրենց դժբաղդու-
թիւնը: որովհետեւ, օտարները գլխաւորաբար
Անգլիացիները, ոսկեհանքերու յայտնութեան
օրէն ի վեր այլեւս հանդարդ չեն ձգած Պօէր-
ները, որոնք տիրացած են Թրանսվալի՝ անոր
իւրաքանչիւր թիզ հողին համար բնիկ Հոլէն-
դոսներուն, Քաֆրներուն, Զուլուներուն եւ
Մանդապեներուն հետ կռուելով: Հարաւային
ափրիկեան միւս հանրապետութիւններուն մէջ
բնութիւնէն ամէնէն աւելի նպաստաւորուածն
է Թրանսվալ եւ ունի հարուստ բուսականու-
թիւնէ մը զատ շատ մը հանքեր որոնք սա-
կայն ընդհանրապէս չի շահագործուած վիճակի
մը մէջ կը մնան, որովհետեւ օտարները, ո-
րոնք հոն եկած են, միայն ոսկիի հանքերը
շահագործելու ետեւէ են: Իսկ Պօէրները ա-
ւելի հողագործական կեանք մը ունին:

Այս դարու սկիզբներուն Թրանսվալ տա-
կաւին կուսական վիճակի մը մէջ կը գըտ-

նուէր: Վայրի ցեղերը, Զուլուները, Քա-
ֆրները, եւ Մանդապեներն էին միայն ո-
րոնք կը վայելէին այս ընդարձակ տարածու-
թիւններու արօտներն ու անտառները, բու-
սականութիւնն ու պտուղները: Սպիտակա-
մորթ մարդը, քաղաքակրթութեան կորիզը,
իր ոտքը չէր դրած տակաւին այդ հողերուն
վրայ: Երբ 1806 թուականին անգլիական ար-
շաւախուժ մը Բարեյուսոյ գլուխը ցամաք
կրկնով կը գրաւէր այդ տեղուանքը, որ այ-
սօր ծանօթ է Քէրլէնտ (Capland) անունով,
հոն կը գտնէր արդէն Հոլանտացի գաղթա-
կաններ, որոնք անգլիական արշաւախուժին
առջեւէն խոյս տալով կը դիմէին դէպ ի հիւ-
սիս: Ամբողջ տասնեակ տարիներ այդ Հոլան-
տացի գաղթականները, որոնք Պօէր անունը
կը կրէին⁽¹⁾ կը դատաւարաւորէին, տեղացի
վայրենի ցեղերու դէմ բռնա կռիւներ մղե-
լու, եւ այսպէս մինչեւ երեսունական թուա-
կանի կէսերը: Այս ատեններն էր, որ սոյն
Հոլանտացի Պօէրները բաւական մեծ կակ
թուով երեւան կուգային Վալ գետի անդիի
կողմը⁽²⁾: եւ ինքզինքնին դէմ առ դէմ կը
գտնէին վայրի ցեղերուն հետ, որոնց մէջ
նոյն իսկ մարդակերներ կային: Հարկադրուած
էին մահու եւ կեանքի կռիւ մը մղել անոնց
հետ: Այս կռիւները կը տեւէին ամբողջ հինգ
վեց տարիներ, ասկից վերջ կը յաջողէին վայրի
ցեղերը իրենց առջեւէն փախցնել եւ այսպէսով
տէր դառնալ երկրին, որ սակայն իրենց բազ-
մաթիւ կեանքեր արժած էր: Մանաւանդ որ
վայրենիներու հետ այդ կռիւները վերջնական
ըլլալու հանգամանքը չունէին իրենց համար,
բաւական երկար առեւն, ու այսպէս վերջն
ալ ամբողջ տարիներով ստիպուած էին կռիւ

(1) Պօէր հոլանտերէն կը նշանակէ զիւղացի, հողա-
գործ:

(2) Թրանսվալ կը նշանակէ Վալի անդիի կողմը:
(Trans-Vaal):

մղել այդ վայրենիներուն դէմ, որոնց երկիրը, իրրեւ աշխատասէր հողագործներ, սկսած էին մեծ եռանդով հերկել: Միւս կողմէն Անգլիա, որ իր ազդեցութեան շրջանակը բաւական լայնցուցած էր Հարաւային Ափրիկէի մէջ, իր պաշտպանութեան տակ կ'առնէր թրանսվալեան այս նոր գաղութը, 1852ին անոր քաղաքական անկախութիւն մըն ալ տալով:

Թրանսվալի հանրապետութիւնը, որ արդէն նահապետական հողագործ տարրերէ բաղկացած էր, պահեց իր այդ բարքերը՝ այդ երկրին մէջ իրրեւ անկախ հանրապետութիւն մը հաստատուելէն վերջն ալ: Պօէր իւրաքանչիւր ընտանիք հանրապետութիւնէն կըստանար մշակելի հողեր, առնուազն 25 քառակուսի մղոն, որուն տէրը կը դառնար ինքը: Այդ ընդարձակ տարածութիւններուն վրայ իւրաքանչիւր ընտանիք կ'արածէր իր հօտերը, եւ յաճախ ամբողջ ամիսներու ընթացքին, բացօթեայ կ'ապրէր: Թրանսվալի ընդարձակ տարածութիւններուն համար Պօէրներու ազգաբնակչութիւնը խիստ ցանցառ էր, որով իւրաքանչիւր ընտանիք կը հարկադրուէր իր հողերուն մէջ կղզիանալ, եւ այսպէսով իրարու միջեւ յարաբերութիւնը տակաւ դադրելով, իրենց քիչ շատ քաղաքակրթական բարքերուն մէջ տեսակ մը խորթացում, վայրենացում կը մտնէր: Պօէրներու շատ ընտանիքներ նոյն իսկ կը սկսէին իրենց բացօթեայ կեանքին մէջ, նաեւ իրրեւ հագուստ կենդանեաց մորթերը գործածել, կը մոռնային զրել կամ կարգալ, եւ միայն անձրեւային եղանակներու շրջանին կը մտնէին իրենց խրճիթները: Բոլոր Պօէր ընտանիքներու խրճիթներուն մէջ միայն Աստուածաշունչը կը տեսնուէր իրրեւ գիրք եւ զայն ալ կարենալ կարդացողներու թիւը տակաւ կը ցանցառէր: Տարուոյն մէջ միայն երեք չորս անգամ Պօէր ընտանիքները կը դէմէին մատուռը, ուր դրեթէ միայն կը պատահէին իրարու, ու այստեղ կը կատարէին իրենց հարսնիքի եւ մկրտութեան արարողութիւնները: Այս առթիւ նաեւ կը փոխանակէին իրենց զանազան ապրանքները եւ գնումներ ու վաճառումներ կ'ընէին: Սոյն մատուռին մէջ էր որ կը վիճէին նաեւ, տարին երեք չորս անգամ իրենց տեղային եւ

ընդհանուր ազգային խնդիրներուն վրայ, որով այդ մատուռը կը դառնար իրենց համար, իրենց անտեսական, ընկերական եւ քաղաքական կեանքին կեդրոնը:

Բայց նահապետական կեանքի այս նախնական պայմանները տակաւ տեղի կուտային: Երկրին բնակչութիւնը հետզհետէ կ'աճէր, ընտանիքներու թիւերը կ'աւելնային, որով իւրաքանչիւր ընտանիքի բաժին ինկած հողի տարածութիւնը տակաւ կը պզտիկնար: Երկիրը կը սկսէր մանաւանդ իրական կերպարանափոխութեան մը ենթարկուիլ, երբ կը սկսէին գուրտէն նոր գաղթականներ գալ: Նոր եկող գաղթականները գլխաւորաբար Անգլիացիներ եւ Գերմանացիներ էին, որոնք հողի տարածութիւններու տէր կը դառնային, կը հարստանային եւ յետոյ երկրին քաղաքացիները կը դառնային: Այս նոր գաղթականներն էին որոնք ընդհանուր զարգացման մը, քաղաքական եւ ընկերական բարդ կեանքի մը պահանջները կը մտցնէին Թրանսվալի նահապետական ժողովուրդին մէջ: Ամէն բանէ առաջ պէտք էր հողին հարստութիւնները շահագործել: Այդ պէտքի առջեւ ծնունդ կ'առնէին արհեստաւորներն ու վաճառականները: Ասոնք էին որոնք հետզհետէ կը մտցնէին զանազան մեքենաներ ու գործիքներ, ինչպէս նաեւ քաղաքակիրթ կեանքի մը մէջ սպառելու յատուկ առարկաներ: Այս ամէնքը իրենց խոր ազդեցութիւնը կ'ունենային Պօէրներու պարզունակ, նահապետական կեանքին եւ բնկերական կարգ ու սարգին վրայ: Այս ամէնուն հետեւանք անհրաժեշտ կը դառնար Թրանսվալի մէջ աւելի կանոնաւոր կերպով կազմակերպուած օրէնսդրական կեանք մը եւ կարգ ու կանոններ:

Թրանսվալ, 1852ին անկախ պետութիւն հռչակուելէն յետոյ, իր երիտասարդ ուժերու առաջադրութեամբ ձեռք կ'առնէր իր կառավարական վերակազմութեան գործը: Այդ երիտասարդ ուժերու պարագլուխներն էին Բրէթօրիուս եւ Բաուլ Քրիւկէր:

Թրանսվալի հանրապետութեան իսկական հիմնադիրը եղած է Բրէթօրիուս, որուն անուանով մայրաքաղաքը կոչուած է Բրէթօրիա, իսկ միւսը Քրիւկէր հանրապետութեան ներ-

կայ նախագահն է , որուն համբաւը տարածուած է Թրանսօվալի ամէն անկիւնը :

Թրանսօվալ՝ անկախ հանրապետութիւն հռչակուելէն վեց տարի վերջը , 1858ին Բրէթորիուսի եւ Քրիւկէրի կուսակցութեան ջանքերուն շնորհիւ կը վերանորոգէր իր սահմանադրութիւնը , որուն նախագահ կ'ընտրուէր Բրէթորիուս , Բրէթորիուսի օրով , իւրաքանչիւր Պօէր , նոյն իսկ նոր եկողը կը ստանար բոլոր քաղաքական իրաւունքները եւ երկրին վարչութիւնը կ'իրացնէր նահապետական-նաւաւարական կառավարութեան մը կարգն ու սարգը :

1858էն մինչեւ 1877 , Թրանսօվալի հանրապետութիւնը թէեւ զարգանալու շատ արագ ընթացք մը չէր ցուցներ , բայց իրեն համար անդորր չըջան մը կ'ըլլար ատիկա եւ այդ միջոցին կը շարունակէր բնիկ վայրենիները ոչնչացնելու գործը :

1877ին վերջերս է որ մէկ անգամէն Թրանսօվալի այդ խաղաղ կեանքը կը վրդովուէր , նոր շատ կարեւոր յայտնութեան մը հանդէպ Թրանսօվալի հողերուն տակ ծածկուած ոսկիի հանքերն էին , որոնք յայտնուելով , Պօէրներուն անդորր կեանքը կը յուզէին : Թէեւ առաջին անգամ բոլոր ոսկիի հանքերուն գոյութիւնը չէր յայտնուած , բայց Անգլիացիները արդէն հոտը առած էին , եւ 1877ի վերջերուն , Անգլիացի գործակալը 30 զինուած մարդոցմով Բրէթորիա կը մտնէր եւ ամէն պաշտպանութենէ զուրկ մայրաքաղաքը գրաւելով զայն իբր անգլիական սեփականութիւն կը հռչակէր : Պօէրները նախ դիմադրութիւն մը չէին ընել , կը բաւականապէս միայն բողոքելով եւ համբերութեամբ կը սպասէին իրենց բողոքի ելքին : Այն ժամանակ Անգլիոյ նախարարապետն էր Լորտ Պիքընսֆիլտ որ ոչ միայն կարեւորութիւն չէր տար Թրանսօվալի անկախ հանրապետութեան ներկայացուցած բողոքին , այլ նաեւ նոր ծրագիրներ կը կազմէր Թրանսօվալը անգլիացնելու համար :

Լորտ Պիքընսֆիլտի ծրագիրներուն արդիւնքն էր , որ Թրանսօվալի մէջ Պօէրներու հոլանտական լեզուին դէմ հալածանք մը կը սկսէր , եւ անգլիերէնը իբր պաշտօնական

լեզու յայտարարուելով , անոր գործածութիւնը պարտաւորիչ կը դառնար զատարաններու եւ դպրոցներու մէջ : Անգլիացիներուն կողմէ ձեռք առնուած այս հայրենասիրական , ազգային քաղաքականութիւնը բնական է որ շատ արագորէն ներգործութիւն մը ունեցաւ Պօէրներուն վրայ , որոնք այնքան յարած էին իրենց լեզուին , բարքերուն ու սովորութիւններուն : Անգլիացիներու կողմէ Պօէրներու դէմ այս քաղաքականութեան հետեւեալ շեշտուելուն , Թրանսօվալէն պատգամաւորութիւն մը ճամբայ ելաւ դէպ ի Լոնտոն , խնդրելու համար թագուհիին կառավարութիւնէն որ Թրանսօվալի ինքնավարութիւնը , Պօէրներուն սովորութիւնները եւ հոլանտական լեզուն անձեռնմխելի մնան : Սակայն Լորտ Պիքընսֆիլտ բնաւ գոհանում չտուաւ Թրանսօվալեան պատգամաւորութեան կողմէ իրեն եղած առաջարկներուն : Ասոր վրայ էր որ Պօէրները վերջապէս զէնքի դիմեցին Անգլիացիներուն դէմ , Պօէրները ի սկզբան բնաւ չէին կարծեր թէ պիտի կարենային իրենց պահանջներուն զէնքի ուժով գոհացում առլ , բայց ներկայ պայմաններուն մէջ նախամեծար կը համարէին քաջութեամբ մեռնիլ պատերազմի դաշտին վրայ , քան թէ զուլս ծռել անգլիական անիրաւ քաղաքականութեան առջեւ : Սակայն ինչ մեծ անակնկալ մը եղաւ ամէնուն , երբ Պօէրները երկու ընդհարումներու միջոցին յաղթանակը տարին անգլիացիներուն դէմ , որոնք հարկադրուեցան նահանջել : Մեծ եղաւ անգլիացիներուն պարտութիւնը մանաւանդ երրորդ ընդհարումի մը միջոցին , բան մը որ ոգևորեց բովանդակ հարաւային Ափրիկէի Պօէրները , եւ ընդհանուր միութիւն մը կազմուելու վրայ էր նաղալի , Օրանժի եւ Քէլթնաի Պօէրներուն միջեւ , միանալու համար Թրանսօվալցիներուն հետ , բայց նոյն միջոցին որ անգլիական պարտութիւններու հետեւանալով պահանջողական Պիքընսֆիլտ ինկած էր եւ իրեն յաջորդած ազատական Կլաւտըթըն . այս վերջինը կը հեռագրէր Քէլթնաի անգլիական կառավարիչին թէ «Անգլիացիները յանցաւոր են Պօէրներուն առջեւ . հաշտութիւն կնքեցէք» : Սոյն հեռագիրը դեռ չի հասած , անգլիացի զօրավարները թէեւ մեծ

պատրաստութիւններ տեսած էին նորէն Պօէր-
ներուն վրայ քաղելու համար, բայց Կլաւտու-
թընի հետագիրը կը հարկադրէր զիրենք վերջ
տալ Պօէրներու դէմ իրենց թշնամութեանց,
եւ հաշտութիւն կը կնքուէր առանց Անգլիա-
ցիներու կողմէ Պօէրներու դէմ որ եւ է յաղ-
թանակ տարուած ըլլալու: 1881ին Անգլիոյ
եւ Թրանսօվալի միջեւ կնքուած հաշտութեան
պայմանագրութիւնը, 1884ին Լոնտոնի մէջ
կը ստորագրուէր: Սոյն պայմանագրութեան
հիման վրայ Թրանսօվալ կը վերստանար իր
անկախութիւնը: միայն կը պարտաւորուէր
առանց նախապէս Անգլիոյ հաւանութեան
ուրիշ պետութեան հետ դաշնակցութիւն չի
կնքելու:

Այստեղ պէտք է աւելցնել թէ 1877էն
մինչեւ 1881 անգլիական կառավարութեան
կողմէ Թրանսօվալի Պօէրներուն դէմ եղած հա-
լածանքները եւ վերջն ալ պատերազմը, ոչ թէ
տկարացուցին Թրանսօվալը, այլ աւելի հա-
սունցուցին զայն: 1884էն սկսեալ Թրանս-
վալի Պօէրներուն ձգտումը եղած է հարաւա-
յին Ափրիկէի բոլոր երկիրը իրար միացնել,
յուսաւորով միանդամայն որ շատ մը փոթորկա-
լից չըջաննեթէ այլեւս կրնան ընդհանուր ան-
դորութեան մը մէջ իրենց զարգացման ճամ-
բան բռնել:

Բայց միւս կողմէ ոսկիի այն հանքերը ո-
րոնք տարուէ տարի յայտնուելու վրայ են,
Անգլիացիներու հանգիստը կը խռովեն, եւ
ատենք ալ իրենց կարգին բնական է որ չափա-
նշան հանգիստ ձգել Թրանսօվալի Պօէրները:

Մանաւանդ 1885ին, Թրանսօվալի Բանտ
նահանգին մէջ ընդարձակ տարածութեամբ
ոսկիի հանքեր գտնուելով: Ափրիկէի այդ մա-
սին վրայ սկսան խուժել բազմաթիւ օտա-
րականներ, եւ այդ տեղուանքները, որոնք
նոյն յայտնութենէն առաջ գրեթէ անապատ
վիճակի մէջ կը գտնուէին, մէկ անդամէն կը
չէննային, ու այդ տեղերուն վրայ էր որ կը
հիմնուէր Եօհաննէսպուրի քաղաքը, ուր այսօր
իր հիմնարկութենէն գրեթէ տասն եւ չորս
տարի վերջ արդէն 150,000ի մօտ բնակչու-
թիւն մը կայ, կէսը սպիտակամորթ եւ կէսը
սեւամորթ: Թրանսօվալի մէջ Պօէրները ընդ-
հանրապէս հողագործական աշխատանքներով

կը զբաղին, միւս կողմէ ոսկեհանքերու աշ-
խատութեանց համար մեծաքանակ արժողու-
թեամբ մեքենաներու անհրաժեշտ պէտք կայ:
այս երկու պարագաները գլխաւոր պատճառ-
ները եղած են, որպէս զի Թրանսօվալի Պօէր-
ները աէր չի դառնան ընդհանրապէս իրենց
երկրին եւ մասնաւորապէս Եօհաննէսպուրի
ոսկեհանքերուն: Այսօր Եօհաննէսպուրիի բո-
լոր ոսկեհանքերը շահագործողները օտարներն
են, որոնք զօրաւոր անանուն ընկերութիւն-
ներ կազմած են, իրենց շահագրիտական գործը
յաջող կերպով յառաջ մղելու համար: Սոյն
բոլոր օտարականները, որոնք այսօր Թրանս-
վալի ոսկեհանքերը ձեռք անցուցած են,
Պօէրներու կողմէ կը կոչուին Ուիթլէնտըր:
Այժմ ամբողջ Եօհաննէսպուրի քաղաքը եւ
աշխարհի ամէնէն հարուստ ոսկեհանքերուն
գլուխը կը գտնուի օտարներուն կողմէ կազ-
մուած 200է աւելի անանուն ընկերութիւն-
ներու ձեռքը: Ամբողջ աշխարհի ոսկիի ար-
տադրութեան 1/5ը ինք արտադրած է 1897ին:

Այսօր շատեր կան այն կարծիքէն որ
1885էն ի վեր ուր ոսկեհանքերու գոյութիւնը
կը յայտնուէր Թրանսօվալի մէջ, երկիրը կոր-
անցուցած է իր անդորութիւնը եւ իր ան-
կախութիւնն ալ կորսնցնելու վտանգին մէջ
կ'ապրի: Մանաւանդ երբ վերջին տասը տար-
ուան պատմութեան հետեւինք Թրանսօվալի
մէջ, յստակ կերպով կը տեսնենք որ անի-
կո անընդհատ մաքառում մըն է Պօէրներուն
եւ Ուիթլէնտըրներուն միջեւ: Այդ մաքա-
ռումներուն պատճառն է Պօէրներուն կողմէ
այն ճիգերը, որով անոնք կը ջանան արգիլել
Ուիթլէնտըրներուն յառաջխաղացութիւնները
իրենց երկրին մէջ եւ չեն ուզեր որ անոնք
ազդեցիկ դառնան հոն: Ոսկիի հանքերու
յայտնութենէն առաջ իւրաքանչիւր Թրանս-
վալ մտնող գաղթական քաղաքացիի բովան-
դակ իրաւունքները կը վայելէր: Երբ ոսկիի
հանքերը անհամար օտարականներ սկսան ի-
րենց քաշել, Պօէրները այս արշաւանքին ղեմ
գնելու եւ իրենց արիւնով վաստկած երկրին
տէրը մնալու համար, ձեռք առին իրենց
կառավարական օրէնքները կազմակերպե-
լու գործը: Այսպէս կ'ընտրուէին վարչա-

կան երկու դահլիճները որոնց ձեռքը կ'անցնէր ամբողջ երկրին կառավարութիւնը : Առաջին դահլիճը աւելի օրէնսդրական հանգամանք մը ունի . կարող է օրէնք մը հրատարակել , առանց ատոր մասին նախապէս երկրորդ դահլիճին հաւանութիւնը առած ըլլալու : Երկրորդ դահլիճը քննելով եղած բոլոր առաջարկները , իր քննութեանց արդիւնքը կը հաղորդէ առաջին դահլիճին : Առանց առաջին դահլիճի համաձայնութեան , երկրորդ դահլիճին մէջ տրուած որեւէ որոշում կարող չէ օրէնքի ուժ ստանալ : Ուրեմն երկրին գերագոյն ատեանն է առաջին դահլիճը , որուն ձեռքն է ամբողջ կառավարութիւնը : Սոյն երկու ատեաններուն անդամները ընտրելու համար , նմանապէս ժողովուրդը բաժնուած է երկու դասակարգերու : Առաջին դասակարգին մէջ կը գտնուին այն բոլոր սպիտակամորթները , որոնք երկրին մէջ հաստատուած են 1876էն առաջ եւ կամ թէ մասնակցած են վայրենիներու դէմ մղուած կռիւներուն . սոյն առաջին դասակարգի ընտրողներուն կը պատկանին նաեւ անոնք որոնք 1881ին Թրանսվալի անկախութեան համար կռուած են : Միայն այս դասակարգն է որ կը մասնակցի առաջին դահլիճի անդամներու ընտրութեան , ինչպէս նաեւ ինքն է միայն որ քուէ կուտայ նախագահական ընտրութեան ամթիւ : Այս ամէնէն յստակ կ'երեւայ թէ կառավարութեան այն մասը որուն ձեռքն է երկրին ամբողջ կառավարութիւնը , Պօէրներու ձեռքն է , իսկ ընտրողներու երկրորդ դասակարգը կը բաղկանայ մնացեալ բոլոր Պօէրներէն եւ այն բոլոր օտար երկրացիներէն , որոնք արդէն երկու տարիէ ի վեր Թրանսվալի մէջ հաստատուած են . ասոնք կ'ընտրեն երկրորդ դահլիճի անդամները : Երկրորդ դասակարգին պատկանող ընտրողները 12 տարի վերջ կ'ընտրուին իրր առաջին դահլիճի ընտրող , պայմանաւ որ իրենց այդ իրաւունքը նախապէս վաւերանայ առաջին դահլիճէն :

Միւս կողմէ Ուիթլէնտրները եւս ունէին իրենց կարեւոր պատճառները Պօէրներուն հետ մաքառելու մէջ ըլլալու համար : Բնական է որ իրենք շատ յստակ կերպով կը տեսնէին իտրութիւնը զոր Թրանսվալի հան-

րապետութիւնը իրենց եւ Պօէրներուն միջեւ կը դնէր , եւ մանաւանդ այդ իտրութեան երեսէն , իրենք իրենց բաղդախնդիրի շահագիտութիւններուն մէջ է որ կը մնասուէին : Ուրեմն Թրանսվալի ներկայ կառավարական կազմակերպութեան դէմ պէտք էր մարտնչիլ , եւ բացէ ի բաց կը պահանջէին Պօէրներուն ունեցած ընտրողական իրաւունքներուն իրենց եւս տրուիլը , առարկելով թէ իրենք , այնքան հարստութիւն բերած են երկրին մէջ , ու անպիսի տուրքեր կը վճարեն կառավարութեան : 1895ին էր որ Ուիթլէնտրներու այս պահանջումը սուր կերպարանք մը ստացաւ Եօհաննէսպուրկի մէջ , մանաւանդ երբ ասոնք տեսան որ անգլիական կառավարութիւնը շատ անտարբեր չէր շարժիր այս խնդրին մէջ , եւ գաղթականութեանց նախարար Լորտ Չէմպլըէյն նոյն իսկ տրամադրութիւն ցոյց կուտար Պօէրներուն դէմ պատերազմ հրատարակելու : Եօհաննէսպուրկի Ուիթլէնտրներուն (որոնց մեծագոյն մասը Անգլիացիներ էին) սոյն պահանջը արդէն առիթ տուած էր բանակցութեան մը , Անգլիոյ եւ Թրանսվալի կառավարութիւններուն միջեւ : Սակայն ճիշդ այս բանակցութիւններու միջոցին էր որ վրայ կը հասնէր Ճէյմսընի ծանօթ դէպքը , որ ըստ ոմանց սակարանական շահագիտութեան խաղ մըն էր , Սէսիլ Բօտէսի կողմէ սարքուած : Ճէյմսըն իր արչաւախումբով , Պօէրներու կողմէ իր պատիժը կրեց եւ այսպէս խնդիրը կարգադրուեցաւ : Այս միջադէպէն մինչեւ 1897 խաղաղութիւնը վերահաստատուեցաւ Պօէրներուն եւ Ուիթլէնտրներուն միջեւ : մինչեւ որ նորէն 1897ի վերջերը յուզումները կ'սկսէին Թրանսվալի Անգլիացիներուն եւ Պօէրներուն միջեւ : Անգլիացիներու կողմէ , միշտ շահագիտական նկատումները պատճառ ըլլալով այս ամէնուն , 1897 թուականին էր , որ Թրանսվալի Անգլիացիները հանրագրութիւն մը կը մատուցանէին Վիքթորիա թագուհիին : Այդ հանրագրութեան մէջ մատնանիշ կ'ընէին Թրանսվալի կառավարութեան այն ընթացքը , որ զիրենք դժգոհ կը ձգէր եւ կը խնդրէին անգլիական կառավարութեան անջակցութիւնը : Լորտ Չէմպլըէյն , արդէն տրամադիր , զբաղեցաւ այն հանրագրութեամբ ,

եւ այս առթիւ յաջողեցաւ միութիւն մը կազմել «Աֆրիքանդէսներու միութիւն» անունով։ Այս բոլոր ցոյցներուն հանդէպ Պօէրները եւս անգործ չէին մնար։ Իրենք եւս դաշնակցութիւն մը կնքեցին Օրանժի եւ Թրանսվալի հանրապետութիւններուն միջեւ, արգելելու համար օտարականներու ի մասնաւորի Անգլիացիներու ռանձգութիւնները իրենց երկրին մէջ։ Ծիշդ այս միջոցներուն էր որ բոլորովին կարեւորութենէ զուրկ պարագաներով Թրանսվալի մէջ Անգլիացի գործաւոր մը կը սպաննուէր Պօէր ոստիկաններու կողմէ։ Այս դէպքը քաղաքական որ եւ է հանգամանքէ զուրկ էր, բայց Չեմպրլէյն մեծ կարեւորութիւն տուաւ եւ ասոր հետեւանք, սկըսան զիւսնադիտական բանակցութիւնները երկու կառավարութիւններուն միջեւ։ Այս բանակցութիւններու միջոցին անգլիական գաղթային նախարարը Թրանսվալի օտարականներուն համար նոր իրաւունքներ կը պահանջէր։ Որպէս զի կարելի ըլլար փոխադարձ պահանջումներուն խաղաղական լուծում մը տալ, յանձնաժողով մը կը կազմուէր Քրիւկէր նախագահն եւ Ափրիկէի անգլիական ներկայացուցիչ Սըր Ալֆրէտ Միլնէրի մասնակցութեամբ։ Սոյն յանձնաժողովի բանակցութիւններուն առթիւ Քրիւկէր նախագահը ընդունեց 12 տարիի տեղ 7ի իջեցնել այն պայմանաւորութեան վերջ օտարականները իրաւունք կունենան Առաջին Դաշիճի ընտրութիւններուն մասնակցելու։ Բայց Չեմպրլէյն չգոհացաւ այս զիջողութեամբ, իր պահանջները շատ աւելի խիստ էին։ Վերջապէս յանձնաժողովին նիստերը փակուեցան առանց երկուստեք համաձայնութեան մը յանգելու եւ անկից յետոյ յարաբերութիւնները աւելի եւս լարուեցան Անգլիոյ եւ Թրանսվալի միջեւ։

Այս բոլոր պատահածներէն վերջ Պօէրները արդէն հասկցած էին թէ Անգլիացիներու հետ իրենց ունեցած տարբերութիւնները միայն զէնքով պիտի յարդարուէին, ուստի երկու տարի էր որ մեծ եռանդով սկսած էին սպառազինուիլ ու այսօր հեռագիրները օրը օրին կը հաղորդեն մեզ պատերազմական այն բոլոր անցքերը, որոնց մէջ Անգլիացիները եւ Պօէրները դէմ առ դէմ եկած են հարաւային Ափրիկէի մէջ։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ

«Մասիս» ի արտօնատիրոջ պահանջումով, մեր համակրելի աշխատակիցը, Սրամ Անտոնեան այսուհետեւ չպիտի կըրնայ աշխատակցիլ մեզ։

Կարապետ էֆ. Իւթիւճեանի, իբրեւ «Մասիս» ի արտօնատէր ըրած պահանջման մասին հարկադրուած ենք յայտնելու որ «Մասիս» ի արտօնատիրոջ կողմէ եղած սոյն պահանջումը, իր ե խմբագրութեան միջեւ եղած պայմանագրութեան տրամադրութիւններուն հակառակ ըլլալով, մեզ կը վերապահենք մեր իրաւանց պաշտպանութիւնը։ Սակայն այս առթիւ չենք կրնար չյայտնել մեր ամէնէն խոր ցաւը զոր կըզգանք մեր վաւուրուն աշխատակցէն բաժնուէնուս համար, ցաւ մը զոր մեր ընթերցողներն ալ պիտի բաժնեն անշուշտ, քանի որ Անտոնեան, իր խանդոտ գրչով ամէնէն տաք համակրութիւններէն մէկը արթնցուցած էր անոնց քով «Մասիս» ի արտօնատիրոջ այս պահանջման հետեւանքով էր որ պարտաւորուած ենք ցրուել տալ Անտոնեանի մէկ ընդարձակ յօդուածը որ յարունակութիւնն էր 18րդ թիւով հրատարակուած «Մամուլին դերը մեր գրականութեան մէջ» յօդուածին։

Վերջացնելէ առաջ հարկ կը տեսնենք ըսելու թէ Կարապետ էֆ. Իւթիւճեանի այս պահանջման ծնունդ տուող պատճառն է Անտոնեանի «Դաս մը» յօդուածը, որ հրատարակուեցաւ «Մասիս» ի 16-17 միացեալ թիւերուն մէջ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Կիսամսեայ «Մասիս» ի

Արսօնսէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՆՈՍԵԱՆ
Թիւ 27, Ֆինանսըլար Եօզուշու, Կ. Պոլիս։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ, Բ. ԳԻՐՔ

Ուսումնական խորհուրդէն վաւերացուած

Հեղինակ ԶԱՊԷԼ ՏՕՆԷԼԵԱՆ

Երկու հարիւր և վեց էջերէ բաղկացած, նորագոյն միակ դասագիրքը արդի աշխարհաբարի համար, մասնաւորաբար դպրոցներու մէջ գործածուելու նպատակով պատրաստուած, կը ծախուի բոլոր գրավաճառներու քով: Գինն է 4 դրուշ: Սոյն գիրքը կը յանձնարարուի նաեւ ամէն անոնց, որոնք կանոնաւոր արդի աշխարհաբար մը կ'ուզեն գրել:

THE INTERNATIONAL BROKER

(Ծանուցում)

Սոյն բոլոր վաճառականները, նաւորդները, խաւարկուները, հնարիչները, առեւտրական մարդիկը, կալուածատէրները և մասնաւոր անձնք որոնք գներու կամ ծախելու բան մը ունին, ինչպէս տուն, շինութեան տեղ, հողեր, հանքային հորեր, գործարաններ, առեւտրական տուներ, բաղէնդներ կամ զանազան ապրանքներու ծրարներ, մեքենաներ, և այլն ինչպէս նաեւ այն տեսակ մարդիկ որոնք կ'ուզեն ուրիշի մը հետ ընկեր ըլլալ կամ ընկեր մը կը փնտռեն, հետազոտութիւններու, առեւտրական գործառնութիւններու, սենտիքաներ և ընկերութիւններ կազմելու և կամ թէ առեւտրական որ և է գործ մը աշխարհիս որ և է մէկ մասին մէջ կատարելու համար, պէտք է որ կարգան, բաժանորդ դրուին (տարեկան 2 շիլին) և ազդարարութիւններ տան վերը յիշուած նպատակներէն միոյն համար, կամ պատասխանեն եղած ծանուցումներու որոնք կը հրատարակուին The International Broker ի մէջ, հասցէն 11, Southampton Row, London W. C



Աշխարհ օգերուն հետ, որոնք հաճելի զովութիւն մը բերած են արդէն, թէյի գործածութիւնը նորէն ամէն տեղ սկսած է: Զով օրերու մէջ թէյին գործածութիւնը հաճելի տաքութիւն մը կը պատճառէ մարդուս, և ասիկա զգացած են ամէն անոնք, որոնք թէյ գործածելու օգտակար սովորութիւնը ունին արդէն: Թէյին հաճելի տաքութիւն մը տուող յառկութիւնը մանաւանդ աւելի կը զգայ մարդ երբ ազնիւ տեսակի թէյ գործածուի: Կ. ԵԱՎԸՆԵԱՆ և Յ. ԻՍՍԳՈՒԼԵԱՆ թէյի վաճառատնք:

խառնուրդներովը, մանաւանդ զինի աժանութեամբ նուաճ բոլոր միւս վաճառատուներուն հետ:

Ուշադրութիւն վաճառատան մարքային:

Վաճառատունը կը գտնուի Կ. Պոլիս Ճեշալ:

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՄԱՍԻՍ, Ա. ՎԵՅԱՄՍԵԱԿ, 392 մեծագիր
 էջերով, ճիշտ բովանդակութեամբ հատոր մը. կը ծախուի 25 դրշի,
 խմբագրատան մէջ: Գաւառներէ և արտասահմանէ ուղղորդները պէտք
 է վճարեն 5 դրշ. եւս, իրը թղթատարի ծախք:

“ՄԱՍԻՍ”Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

Արսաւես ԷՅ. Յարութիւնեան	ՄԱԼԿԱՐԱ
Սամուէլ ԷՅ. Թօփալեան	ԷՆԿԻՒՐԻՒ
Տոք. Մելիսեղեկեան	ՊՐՈՒՍԱ
Սեփան ԷՅ. Սալիբեան	ԱՏԱԲԱԶԱՐ
Կարապետ ԷՅ. Մալեանեան	ԻԶՄԻՐ
Տոք. Յովսէփ ԷՅ. Սեփանեան	ՊԱՐՏԻԶԱԿ
Մկրտիչ ԷՅ. Էրկանեան	ՄԱՂՆԻՍԱ
Յարութիւն ԷՅ. Էվրեմեան	ԿԻՐԱՍՈՆ
Ռուբեն ԷՅ. Զարգարեան	ԽԱՐԲԵՐԻ
Արժ. Մուշեղ Վրդպ. Սերոբեան	ԱՐԱԲԿԻՐ
Մանուկ ԷՅ. Դանիէլեան	ՏԻԱՐՊԷՔԻՐ
Խաչիկ ԷՅ. Թաւեան	ԹՈՒԲԱԴ
Սեփան ԷՅ. Դաւիթեան	ՍՐՎԱԶ
Պօղոս ԷՅ. Սիմոնեան	ՍԱՄՍՈՆ
Աւետիս ԷՅ. Կիւլպեկեան	ՄԱՐԶՈՒԱՆ
Արամ ԷՅ. Առաքելեան	ԷՏԻՐՆԷ
Ս. ԷՅ. Էքմեքեան	ՏՐԱՊԵԶՈՆ
Ս. ԷՅ. Տէր-Ազարեան	ԿԱՐԻՆ
Պետրոս ԷՅ. Ուրծալեան	ԱՏԱՆԱ
Մովսէս ԷՅ. Մալախեան	ՍԻԼԻՎԵՐԻ
Բենիամին ԷՅ. Մկրտիչեան	ԵՈԶԿԱԴ
Սարգիս ԷՅ. Ամասեան	ԵՐԶՆԿԱ
Գրիգոր ԷՅ. Կիրակոսեան	ՆԻԿՈՄԻԴԻԱ
Գարեգին ԷՅ. Թիւրքիւնեան	ԱՅՆԹԱՊ
Տօք. Նրուանդ ԷՅ. Արապեան	ՊԱՂՏԱՏ
Ն. ԷՅ. Պեմեմեան	ՄԱԼԱԹԻԱ

Պօղոս մէջ «Մասիս» ձեռքէ կը ծախուի բոլոր լրագրավաճառներէ
 և ԷՆԿԻՒՐԻՒ ՊԱՂՏԱՏ-Գալուի ջրավաճառներուն քով:
 Համար պէտք է դիմել խմբագրութեան,
 Երևան, Թիւրքիւնեան փողոց թիւ 27: